№ 248 ՀԻՆԳՇԱԲԹԻ 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ
1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՀԻՆԳՇԱԲԹԻ 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 248

Տարեկան գին 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ԱՌԵՒՏՐԱ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
„ՌԵԿՏԻՖԻԿԱՏ“ („Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ“ ֆիրմայի անուան տակ առևտուր անող)
առաջարկում է նոր վաճառքի հանված ՕՂԻ, „ՌԵԿՏԻՖԻԿԱՏ“ ետիկետներով, պատրաստված ՀԱՑԻ ամենալաւ յատկութեան եւ զտված սպիրտից:
(ե.հ.կ) առ. 850. 10—9
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԱՄԵՆՈՒՐԵՔ

Սալօմէ Մանդինեան, Քրիստափոր և Ռուբէն Գրիգորեան ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆՆԵՐԸ, Սօֆիա Խարիտոնեան Յովհաննիսեանցը, Նունէ Խարիտոնեան Շահբուդաղեանցը յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինների թանգագին ամուսնու և հօր, իսկ վերջինների եղբօր՝

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԿԻՆ ՈՒՍՈՒՑԻՉ

Գրիգոր Խարիտոնեան ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆԻ

մահը: Մարմնի յուղարկաւորութիւնը Միքայէլեան հիւանդանոցի մատուռից՝ այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 7-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Կուկիայի ս. Աստուածածնի եկեղեցին (Վօրոնցօվի արձանի մօտ): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:
1007. 1—1

Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների և յարգելի հայ հասարակութեան, որ 1) Վերսկսվում են Ընկերութեան մշտական գրական երեկոյթները: Առաջին երեկոյթը նշանակված է նոյեմբերի 7-ին, հինգշաբթի, երեկոյեան 8 ժամին: Կը դասախօսէ պ. Գ. Իփէկեանը. նիւթն է՝ «Թիւրքահայ գրականութիւնը»: Երեկոյթները տեղի կունենան հինգշաբթի օրերը —Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. դահլիճում: 2) Ընկերութեան այն անդամները, որոնք կանոն. § 6-ի համաձայն մինչև այժմ չեն վճարել իրանց անդամավճարը՝ Ընկերութիւնից հեռացած են համարվում: Նրանք կարող են նորից անդամ համարվել, եթէ վճարեն ապառիկ անդամավճարը:

Նորից անդամագրվողը իրաւունք ունի անվարձ յաճախել գրական երեկոյթներին:
(ա.օ.) առ. 998. 2—2

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ
Այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 7-ին, տեղի կունենայ ցիրկային խոշոր ներկայացում մասնակցութեամբ առաջնակարգ արտիստների: երկրորդ դէբիւտ ծաղրածուներ Մակսի և Ջաֆֆօնդի, նոյնպէս և ըմբշամարտ: Կըմբշամարտեն — Կարմիր մառկան՝ Բէրնարդի հետ, Զալէվսկին՝ Սալի-Սուլէյմանի հետ. վճռական մարտ Մուխանուբայի և Մայսուրաձէի միջև. յետոյ Իվան Կայինը՝ Սէննիկի հետ:
Ներկայացման սկիզբը ժամը 8-ին, ըմբշամարտի սկիզբը ժամը 9½-ին, իսկ ներկայացման աւարտը ժամը 11-ին:
առ. 1006. 1—1

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ №7.
(հ.կ.) 357 50—50

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ: Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ: Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ: Бебутовская 23, тел. 7—92.
(ա.օ.) առ. 977. 100—6

ԲԺԻՇԿ
Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ հիւանդութիւններ:
(Առանձն. կրծքի, թոքախտի և արեան պակասութեան)
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Ամեն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը
Գրաֆսկայա, 3 (Լօրիս-Մելիքօվսկայա փողոցի կողմից)
(ե.հ.կ.) առ. 774. 25—22

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):
Ընդունելութիւն՝
Ամեն օր (Առաւօտեան ժ. 9—2-ը
(Երեկոյեան ժ. 4—7-ը
Անկիւն Արտս-Արադսկայա հրապարակի և Լերմոնտօվսկայա փողոցի, № 1.
(ե.հ.կ.) առ. 679. 74—23

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 նոյեմբերի

Պետերբուրգ.—Ի պատասխանի «Рус. Ривьера» ցուցահանդէսի մասնաժողովի նախագահի ուղարկած ամենահպատակ հեռագրի, ստատս-սեկրետար Երմոլօվ բաղդաւորվեց ստանալ Բարձրագոյն հետևեալ հեռագիրը. «Շնորհակալ եմ անկեղծօրէն մասնաժողովից եւ ցուցահանդէսին մասնակցողներից աղօթքների եւ արտայայտած զգացմունքների համար: Շատ ցաւում եմ, որ չեմ կարող այցելել ցուցահանդէսը: ՆԻԿՕԼԱՅ»:

—

Բաթում.—Մի անյայտ մարդ, հետապնդվելով ոստիկաններից, կրակեց մաուզերից և վիրաւորեց խուզարկու ոստիկանութեան երկու գործակալների և ինքն էլ սպանվեց: Նրա մօտ գտնվեց փամփուշտակալ լի փամփուշտներով: Ոտքերի շուրջ փաթաթած ունէր 600 րուբլի գումար՝ հարիւր րուբլանոց թղթադրամներով: Վիրաւորված գործակալների դրութիւնը վտանգաւոր է:

—

Բերլին.—Վիլհէլմ կայսրը շնորհեց առաջին կարգի թագի շքանշան վարկային դիւանատան վերատեսուչ Դաւիդօվին, ֆինանսների մինիստր Դորլիակին—երկրորդ կարգի թագի շքանշան:

Պետական կանցլերը ճաշ տուեց ի պատիւ ստատս-սեկրետար Կօկօվցեվի: Ներկայ էին ռուսաց դեսպան Սվերբեևը դեսպանատան պաշտօնեաների հետ, Դաւիդօվը, մինիստրի քարտուղար Դորլիակը, Պետերբուրգի գերմանական դեսպան Պուրտալէսը, գերմանական և պրուսական մինիստրները: Ճաշից յետոյ ստատս-սեկրետար Կօկօվցեվը երկար խօսակցութիւն ունեցաւ կանցլերի հետ:

«Կրէյց-Ցայտունգը» շատ ջերմ խօսքերով ողջունում է ստատս-սեկրետար Կօկօվցեվին ընդգծելով Ռուսաստանի ֆինանսական ու տնտեսական զարգացումը ստատս-սեկրետար Կօկօվցեվի երկարամեայ և վերին աստիճանի խելացի կերպով ֆինանսական մինիստրութիւնը կառավարելու ժամանակ: Վերջում լրագիրն ասում է. «Եթէ ռուս մինիստրների Բերլին այցելելը ըը նպաստէ ոչնչացնելու Ռուսաստանում անպատասխանատու տարրերից խրախուսվող անվստահութիւնը դէպի Գերմանիայի մտադրութիւնները, այդ բանում արդէն կը պարունակվի մեծ շահ երկու երկիրների ապագայ յարաբերութիւնների համար, որի հետևանք կը լինի նորից մերձեցումն Ռուսաստանի և Գերմանիայի միջև, ինչպիսին գոյութիւն ունէր Բիսմարկի ժամանակ»:

—

Փարիզ.—Սպանական թագաւորական զոյգը այցելութիւններ փոխանակեց հանրապետութեան պրեզիդենտի և նրա կնոջ հետ: Ցերեկով պրեզիդենտը և թագաւորը անպաշտօնապէս ընդունվեցին քաղաքային ինքնավարութիւնից:

Պատգամաւորների պալատը 333 ձայնով ընդդէմ 225-ի ընդունեց ընտրողական բարենորոգման օրինագիծը:

Կ. Պօլսից, օսմանեան բանկից տեղիս բաժանմունքին 40 արկղով, իւրաքանչիւրի մէջ 12,0000 ֆրանկ, ոսկի փոխադրելիս գողացված է 46,000 ֆրանկ ոսկի, ըստ երևոյթին արտասահմանում:

—

Սօֆիա.—Գեննադիևը մեկնում է Վիէննա Ֆերդինանդ թագաւորին գեկուցանելու համար:

—

Բելգրադ.—Պաշիչի փոխարէն մինիստրների խորհրդի նախագահ նշանակվեց Նիկօլիչը:

—

Աթէնք.—Կառավարութիւնը մօտիկ ապագայում պալատին օրինագիծ է ներկայացնելու ճան. հաղորդակցութեան նոր մինիստրութիւն հիմնելու մասին:

—

Վիէննա.—Այսօր սկսվեցին պատգամաւորութիւնների նիստերը: Աւստրիական պատգամաւորութիւնը նախագահ ընտրեց լեհական կօլօյի պարագլուխ Լէօին, ունգարական պատգամաւորութիւնը՝ բարօն Լանգին: Երկու նախագահները իրանց ճառերի մէջ ի պատիւ կայսրի և թագաւորի «հօխ» արտասանեցին:

—

Լէդիսմիտ.—Սկսվեց հնդիկների յուզմունքը: Դրութիւնը լուրջ է: Ազգաբնակութիւնը պահանջեց զինել ոստիկանութեան և հիմնել զինված քաղաքացիական զօրագունդ:

—

Դուրբան.—Հնդիկների ընդհանուր գործադուլ է: Մասնակցում են կառապաններ, խոհարարներ, ցրիչներ և սպասաւորներ: Գործադուլները փորձում են ահաբեկել եւրոպացիներին և հրդեհներ են ձգում:

—

Հռոմ.—Աւստրիայի ոտնձգումները՝ ստանալ Փոքր-Ասիայում Ալայիս նաւահանգիստը վերաշինելու և երկաթուղի կառուցանելու կօնցէսիա, տեղիս քաղաքական շրջաններում առաջ են բերում ամենասաստիկ յուզմունք:

—

Լիսաբօն.—Պատգամաւորների պալատում 37 տեղերից 34-ը պատկանում են մինիստրութեան կողմնակիցներին և դեմօկրատներին: Ընտրութիւնները անցան հանգիստ:

—

Մալտա.—Նախատեսվում են կարևոր փոփոխութիւններ միջերկրական ծովի մեծ-բրիտանական նաւահանգստում:

—

Ցէուտա.—Ակսֆի զօրամասի մի մասը թակարդ ընկաւ: Կատաղի կռւից յետոյ թշնամին փախաւ: Սպանացիների կողմից սպանվել են 3, վիրաւորվել են 4 հոգի:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

«Веч. Вр.»-ն ստոյգ աղբիւրներից տեղեկացնում է, որ մինիստր-նախագահ Կօկօվցևը Բերլինում քննութեան առարկայ է դարձնելու հայկական բարենորոգումները:

—

Բերլինից հեռագրում են. «Արժանահաւատ աղբիւրներից տեղեկացնում են, որ Վ. Կօկօվցևը առաջարկեց գերմանական կանցլէրին Փոքր-Ասիայում և Հայաստանում գործադրելու համար Ֆրանսիայի և Ռուսաստանի ձեռքով մշակված բարենորոգումների նախագիծը: Այդ առիթով Գերմանիան կարևոր բանակցութիւններ է սկսել Ֆրանսիայի հետ»:

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

—

Մէրսին, 2 հոկտ.

◆ Կիլիկիոյ կաթողիկոսը երկու-երեք ամիսներէ ի վեր ճամբորդութեան մէջ է: Վեհափառը այցելած է հետզհետէ Մարաշ՝ քաջալերելով հոն հայոց և հայ-բողոքականաց դպրոցական միութիւնը, Այնթապ՝ ուր աշխատած է Կիլիկեան ճեմարանին նոր հաստատութեան վիճակովը: Անկէ կաթողիկոսը Քիլիս և Հալէպի վրայով նորէն Սիս պիտի վերադառնայ, կըսուի, Իսկէնդէրունի ճամբով:

◆ Զաւէն եպիսկոպոսին պատրիարք ընտրուիլը ժողովրդեան մէջ համակիր զգացումներով ընդունուեցաւ: Կարնոյ, Վանայ նախկին և Դիարբէքիրի ներկայ առաջնորդը, որ իր պաշտօնավարութեան ժամանակին մեծագոյն մասը երկրին մէջ անցուցած է, կը յուսացուի, որ իր փորձառութեամբ կարենայ օգտակար հանդիսանալ նոյն այդ երկրին դժբաղդ հայութեան:

Սակայն պարագայ մը կայ, որ մտածել կուտայ: Միայն ընտրուածներուն անցեալն ու անձնուիրութիւնն չեն բաւեր իրենց պաշտօնավարութիւնը արդիւնաւոր ընծայելու, որ կապուած կը մնայ ուրիշ շատ մը օժանդակ պայմաններու ևս:

Պատրիարքը սահմանադրական պաշտօնեայ մըն է՝ ընտրուած սահմանադրապէս և պարտաւորուած գործելու սահմանադրապէս ընտրուած ժողովոց հետ միասին: Արդ, ազգ. երեսփոխանական ժողովը, որ իր մեծամասն քուէովը զայն պատրիարքութեան կոչեց, իր յետագայ անտարբերութեամբը, անգործութեամբը նորընտիրին «ովսաննայէն» ետք՝ «ի խաչ հան զդա»-ի վիճակին պիտի հասցնէ, ինչպէս ըրաւ Արշարունիի պարագային:

Այո, ազգ. ժողովի մեծամասնութիւնը—անգոյն, աննկարագիր և անհաստատ—այս անգամ ալ պիտի կարծէ թէ կատարած եղաւ իր պարտքը զայն ընտրելով: Մեզ յայտնի է, թէ պատրիարք մը լաւ պիտի կրնայ գործել՝ լաւ ժողովականաց և զինք բանող պարտաճանաչ երեսփոխութեան մը հետ: Մինչ ասոնց հակառակն է որ տեղի կունենայ: Ազգ. ժողովին մեծամասնութեան անպարտաճանաչութիւնը և դասական անտարբերութիւնը պիտի լքեն զինք՝ յանձնելով ընդդիմադիր և խայտաբղէտ ուժերով լի ժողովներու, որպիսիք կան այժմ, և վերջէն ալ՝ ելնեն պիտի զինք դատապարտելու, թէ պատրիարքը իր սկզբունքներուն դըրժած է, աննկարագիր է և այլն:

Եթէ ազգ. ժողովը իր գործը լրացնել կը բաղձայ, ուրիշ միջոց չունի՝ բայց եթէ կարող, ժամանակ ունեցող և գործունեայ անդամներէ բաղկացած վստահելի ժողովներ տալ նորընտիր պատրիարքին, ապա թէ ոչ՝ կը վախնանք թէ, երկնքէն հրեշտակ իսկ բերեն, ոչինչ աղէկ պիտի չելլէ մէջէն:

Փոքրամասնութիւնը, ազգ. ժողովին մէջ, պէտք է խոստովանիլ, շատ աւելի կազմակերպուած և գործունեայ է: Ահա թէ ինչու իրենցմէ մէկ-երկուքը, երբ կը յաջողին մտնել ժողովի մը մէջ, իրենց դրոշմը կը դնեն հոն, մինչ միւսները իրենց ոչնչութեամբը կը փայլին: Ու պատրիարք մը, որ, յամենայն դէպս, ստիպուած է կռթնիլ ժողովի վրայ, մեծամասնութեան վատ անտարբերութենէն երբ ստիպուած գործել սկսի միւսներուն հետ, կը սկսինք զինք վարկաբեկել, և որովհետև այդ «միւսներն» ալ գործածելով մեծամասնութեան լքած պատրիարքը, պիտի չներեն սակայն անոր՝ իրենցմէ չըլլալուն—ինչպէս եղաւ Արշարունիի պարագային—անպատիւ կերպով պիտի ճամբեն զինք: Մաղթենք, որ այսպէս չըլլայ Զաւէնի համար ալ:

Դիտող

ԱԴԱԲԱԶԱՐԻ ԴԷՊՔԸ

—

Պատերազմական ատեանն երէկ աւարտեց Ադաբազարի դէպքին առիթով ամբաստանուած անձերուն դատավարութիւնը: Անկէ առաջ ընդ հսկողութեամբ Պոլիս բերուած 13 անձերէն զատ, 12 հոգի ալ կոչնագիր ստանալով վերջէն եկած էին: Կարգ մը վկաներէ յետոյ, լսուեցան նաև պաշտպանողականները, ինչպէս նաև ընդհանուր դատախազին կարծիքը, ու պատերազմական ատեանը, յետ խորհրդակցութեան, տուաւ իր վճիռը, եղեռնագործ նկատելով Աշոտ Թումաեանը և ոստիկան-զինուոր Արամը, առաջինը պատժական օրէնքին 174-րդ յօդուածին տրամադրութեան համաձայն, իր յանցանքը ծածկելու համար ոճիր գործած ըլլալու ամբաստանութեամբ, իսկ երկրորդը դատապարտուեցաւ ըստ պատժական 45-րդ և 174-րդ յօդուածներուն, տասը տարի թիապարտութեան: Թագւոր Կուրտեան 3, Սմբատ Մակուեան և Պետրոս Կիւզելեան մէկ-մէկ տարի, Յովհաննէս Կանծա և Հաջի Սարգիս Անդրանիկեան 8-ական ամիս, Ռուբէն Սարըեան, Խաչատուր և Մկրտիչ Աճէմեան 6-ական ամիս, և ոստիկան-զինուոր Խաչատուր մէկ ամիս բանտարկութեան դատապարտուած են: Իսկ տեարք՝ Արամ Նիկողոսեան, Վահան Գույումճեան, Տիգրան Պաղտիկեան, Յակոբ Կարագեան, Գրիգոր Սիւքէրեան, Յովհաննէս Ալեքսանեան, Ստեփան Իշխանեան, Զարեհ Գօչեան, Հաջի Պետրոս Մուրատեան, Անդրանիկ Կէօճէնճեան, Դաւիթեան, Ծրկայեան, Ճէզայիրլեան, Սվաճեան, Լէֆթէր Միսաք և այլք անպարտ արձակուած են:

Պատժական օրինաց 174-րդ յօդուածն է հետևեալը.

«Եթէ մէկը առանց կանխամտածման ուրիշ մը սպաննէ, 15 տարի թիապարտութեան կը դատապարտուի, բայց եթէ այս սպանութիւնը խորհրդարանի անդամներէն կամ կառավարական պաշտօնեաներէն մէկուն դէմ իր պաշտօնին կիրառութեան պարագային կամ պաշտօնի կիրառութեան հետևանօք տեղի ունեցած է և կամ ոճիրը խոշտանգմամբ կատարուած և կամ մէկէ աւելի մարդոց դէմ գործուած է՝ գործողը ցկեանս թիապարտութեան կը դատապարտուի: Երբ ոճիր մը կը գործուի՝ յանցանքի մը պատրաստութեան կամ դիւրութեան և կամ գործադրութեան և այդ յանցանքին բուն հեղինակին և կամ մեղսակիցներուն փախուստը կամ անպատիժ մնալն ապահովելու համար, ոճիրը գործողը մահուան կը դատապարտուի»: («Բիւզանդիոն»)

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Շամախու մեր թղթակիցը յայտնում է, որ այդ քաղաքի հայ հասարակութիւնը, ինչպէս և ամբողջ քաղաքը, բացի այն, որ առանձին պատգամաւորութիւն են նշանակել—յանձին թիֆլիսաբնակ Ներսէս Աբէլեանի և Շամախուց յատկապէս ուղարկված ուսուցիչ Գ. Տէր-Ռուբինեանի—Ալ. Քալանթարի թաղմանը մասնակցելու և իրանց կողմից ցաւակցութիւն յայտնելու թէ հանգուցեալի ընտանիքին և թէ մեր թերթի խմբագրութեան, Ալ. Քալանթարին յարգող շամախեցիներն մի խումբ անձինք առանձին խորհրդակցութիւն կազմելով՝ վճռել են հանգուցեալի յիշատակին սգահանդէս կազմակերպել նրա մահվան քառասունքին։ Նոյն խորհրդակցութեան միջոցին Ս. Մ. Սարգսբէկեանն առաջարկել է՝ 1) կախել Ալ. Քալանթարի մեծադիր պատկերը հայոց գր.-ընթերցարանի դահլիճում, և խորհրդակցութիւնը յանձնարարել է նրան այդ առիթով բանակցութեան մտնել գրադարանի վարչութեան հետ. 2) հանգուցեալի անունով պահել մի թոշակաւոր Շամախու նոր բաց թեմ. դպրոցում և հոգալ այդ թոշակաւորի բոլոր ծախսերը։ Նոյնպէս և ցանկութիւն է յայտնվել մասնակցել Ալ. Քալանթարի անունը յաւերժացնելու նպատակով հիմնվելիք ֆօնդին։

Կարսի մեր թղթակիցը գրում է մեզ, թէ հոկտ. 27-ին այնտեղ էլ հոգեհանգիստ է կատարվել Ալ. Քալանթարի յիշատակին՝ խուռն բազմութեան ներկայութեամբ։

Մոսկվայից էլ գրում են մեզ, թէ հոկտ. 27-ին այնտեղի հայոց եկեղեցում պատարագից յետոյ հոգեհանգիստ է կատարվել Ալ. Քալանթարի յիշատակին։ Դամբանական ճառ է խօսել բժ. Ս. Շահ-Նազարեանը՝ բնորոշելով հանգուցեալի կատարած դերը մեր հասարակական-կուլտուրական կեանքում։

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Ուղղված Կայսեր. Կովկ. Գիւղատնտ. Ընկերութեան)

Մոսկվա, 21 հոկտ.

Շտապում եմ յայտնել ձեզ մեր խորին վշտի զգացմունքը անմոռանալի Քալանթարի մահվան առիթով։ Խնդրում եմ յայտնել ընտանիքին անկեղծ ցաւակցութիւն և դնել պսակ այս վերնագրով «Թանգագին և անմոռանալի Ալէքսանդր Հայրապետեան Քալանթարին՝ «Молочное Хозяйство» մամուլի խմբագրութեան կողմից»։

Լէմուս

(Ուղղված Կայս. Կովկ. Գիւղատն. Ընկերութեան)

Քութայիս, 24 հոկտ.

Խնդրում եմ յայտնել Քութայիսի Գիւղատնտեսական Ընկերութեան կողմից և անձամբ ինձանից խոր ցաւի զգացմունքներ՝ հասարակական գործիչ և Կովկասի գիւղատնտեսական կեանքի հմուտ գիտակ յարգելի Քալանթարի վաղաժամ մահվան առիթով։

Ընկերութեան նախագահի փոխարէն
Ցուլուկիձէ

(Ուղղված Հայ գիւղատնտ. և Տնայնագ. Ընկերութ.)

Պետերբուրգ, 24 հոկտ.

Գիւղատնտեսութեան հայ ուսանողների շրջանը ողբում է Կովկասի գիւղատնտես վետերան Քալանթարի կորուստը։

Վարչութիւն

(Ուղղված «Գիւղատնտեսի» խմբագրութեան)

Գօրի, 24 հոկտ.

Խորապէս ցաւում ենք մայրենի անդաստանի անդուլ գործիչ Քալանթարի մահվան համար։

Գիւղատնտեսներ՝ Կոստանդին Ամիրաջիբի, Ելիզբար Կարբելաշվիլի

(Ուղղված Կայս. Կովկ. Գիւղատնտ. Ընկերութեան)

Պետրովսկ-Րազումովսկի, 25 հոկտ.

Մոսկվայի գիւղատնտեսական ինստիտուտի Կովկասի ուսանողութիւնը յայտնում է իր վիշտը յայտնի մասնագէտ և հասարակական գործիչ Քալանթարի կորստեան առիթով։

(Ուղղված հանգուցեալի ընտանիքին)

Բագու, 24 հոկտ.

Խորապէս ցնցված եմ Քալանթարի անսպասելի մահվան գուժով. իմ խօսքերը անկարող են արտայայտել այն վիշտը և սարսափը, որ պիտի զգայ ամէն մի գիտակից հայ, երբ խոր ըմբռնի այդ տրագիկ երևոյթը։ Հասարակական ասպարէզից իջաւ ոյժով և եռանդով լի մի մարդ, որ կանգնած էր իր կայանի վրա և միշտ մասնակցում էր հասարակական շինարարութեան սև և ծանր աշխատանքին։ Հասարակական գիւղատնտեսական սակաւաթիւ ընտանիքը զրկվեց նրանով անկեղծ ղեկավարողից՝ ուժեղ հմտութեամբ և երկրի խոր ուսումնասիրութեամբ։ Հայ գիւղը զրկվեց իր հաւատարիմ սիրող բարեկամից։ Չեմ գտնում խօսքեր ձեզ մխիթարելու այս ծանր րոպէին. թող այն գիտակցութիւնը, որ հանգուցեալը կատարել է մեծ օգտաւէտ գործ Կովկասի, հայ գիւղի և հասարակութեան համար և որը տուել է առատ ընձիւղներ, լինի մխիթարութիւն ձեզ և ընտանիքի համար։

Յովսէփ Աթաբէկեան

(Ուղղված Արշակ Քալանթարին)

Վլադիկավկազ, 27 հոկտ.

Յայտնում եմ սրտագին ցաւակցութիւն թանգագին և անմոռանալի ընկեր Քալանթարի վաղաժամ մահվան առիթով։ Նրա մահով Կովկասի բնակչութիւնը զրկվեց իր վարժապետից, երկիրը ճանաչողից. հանգիստ նրա աճիւնին, ամէն։

Միքայէլ Ունանեան

(Ուղղված հանգուցեալի ընտանիքին)

Պետերբուրգ, 23 հոկտ.

Թոյլ տուէք ձեր անձնական և հայ ժողովրդի վշտին միացնել և մի մարդու ձայն, որ վաղուց ի վեր յարգում և գնահատում էր անմոռանալի Քալանթարին, իբրև մի մարդու՝ որը ամբողջապէս նուիրված էր հասարակական ամենաբարձր գաղափարներին ծառայելու։

Ֆալբորկ

Երզրում, 3 նոյեմբ.

Բազմարդիւն հրապարակագիր և ազգային իրաւունքների պաշտպան Քալանթարի մահվան առիթով ընդունեցէք ցաւակցութիւններս։

Առաջնորդ Տարօնի՝
Ներսէս եպիսկոպոս Խարախանեան

ԴՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Ստացանք Ալ. Քալանթարի անուան հիմնվելիք ֆօնդի համար «Մեղու» ընկերութիւնից 15 րուբլի։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ

ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ

Մինչև այժմ յօգուտ դպրոցական ֆօնդի ստացած ունէինք 604 րուբլի, որից 112 ր. յօգուտ Կ. Պոլսի Հայոց Միացեալ Ընկերութեանց։ Մնացած 492 րուբլին յանձնեցինք Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին՝ Էջմիածնի սինօդին ուղարկելու համար։

Նոր ստացանք, երէկ, Կովկ. Հայուհեաց Բար. Ընկերութեան ուսուցիչ-ուսուցչուհիների և աշակերտուհիների շրջանում հանգանակված 27 րուբլին։

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Աստրախան, 27 հոկտ.

Մենք էլ տօնեցինք տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ մեծ յոբելեանները։

Ամբողջ յոբելեանական տարվայ ընթացքում տեղական ռուս թերթերը ևս շարունակ տպագրում էին մեծ յոբելեաններին վերաբերեալ տեղեկութիւններ և այսպիսով՝ մտքով, գործով կենտրոնից կտրված աստրախանցիներին իրազեկ անում գործի դրութեան հետ...

Դեռ անցեալ տարի, երբ ծխական ժողովներից մէկում մի մասնաժողով ընտրվեց դպրոցական ֆօնդի համար ժողովարարութիւն անելու, միևնոյն ժողովում տօնակատարութեան պարտականութիւնը դրվեց տեղիս Գրական-Գեղարուեստական Ընկերութեան վրա։

Եւ դա բնական էր. հայ դպրոցներից զուրկ Աստրախանում մի այդպիսի մեծ կուլտուրական տօնի հետ ծանօթացնելու պարտաւորութիւնը, անշուշտ, ընկնում էր Գրական-Գեղարուեստական Ընկերութեան վրա։

Յիշեալ Ընկերութիւնը սեպտեմբեր ամսին բաց անելով իր գործունէութեան սեզօնը՝ առաջինը դրեց մեծ յոբելեաններին նուիրված մի փառաւոր հայկական երեկոյթ կազմակերպելու հարցը, որը գլուխ բերելու համար որոշեց չը կանգնել ոչ մի ծախսի առաջ։

Ընկերութեան այդ առաջարկին ընդառաջ գնացին տեղական հարուստներից մի քանիսը, որոնք և նիւթականապէս օգնութեան գալով՝ նպաստեցին երեկոյթի գլուխ գալուն։ Ընկերութիւնը որոշեց. 1) թեմական դպրոցի երկու դահլիճները զարդարել հայկական կեանքից վերցված մեծադիր պատկերներով. 2) հրաւիրել Կովկասից աշուղների մի խումբ. 3) սենեակներից մէկը յատկացնել հայ պարբերական մամուլին. 4) մի ուրիշ սենեակ էլ յատկացնել հայ գրողներին։

Բացի այդ բոլորից՝ որոշվեց տեղական ոյժերով հրատարակել մեծ յոբելեաններին նուիրված մի ժողովածու, որը խմբագրելու համար ընտրվեց խմբագրական մասնաժողով։

Վերջապէս հոկտ. 19-ին տեղի ունեցաւ թեմական դպրոցի բոլոր սենեակներում մի մեծ հայկական երեկոյթ։ Իսկապէս աստրախանցիների համար դա մի նորութիւն էր. շատ ժամանակ էր, որ այդպիսի մի երեկոյթ չէր տեսել Աստրախանը։

Մեծ դահլիճի ճակատը զարդարված էր ս. Մեսրոպի և ս. Սահակի մեծադիր պատկերներով, որոնց մէջտեղում մի մեծ շրջանակի մէջ կախված էր հայոց այբուբենը. թէ այդ պատկերները և թէ այբուբենը զարդարված էին էլեկտրական գոյնզգոյն լապտերներով։ Դահլիճի արևելեան ամբողջ պատը բռնված էր Արարատի մեծադիր պատկերով։ Թեմական դպրոցի փոքր դահլիճը, որը է և միևնոյն ժամանակ Գրական-Գեղարուեստական Ընկերութեան դահլիճը, ամբողջովին զարդարված էր գորգերով և հայկական կեանքից վերցված իւղանկար պատկերներով. այդտեղ կար նաև գիւղական մի փոքրիկ խրճիթ։

Այնուհետև սենեակներից մէկի պատերից կախված էին համարեա բոլոր հայ պարբերական հրատարակութիւնները (Թիւրքիայի, Պարսկաստանի, Եւրոպայի և Ռուսաստանի), իսկ մի ուրիշ սենեակում կախված էին մեր աչքի ընկնող հայ գրողների պատկերները։

Երեկոյթը բացվեց Ս. Ք. Ասլանեանի ռեֆերատով՝ տառերի գիւտի և տպագրութեան մեծ յոբելեաններին նուիրված։

Այնուհետև տեղի ունեցաւ հայ բարբառների ընթերցումը, բարբառին համեմատ տարազով։ Մեծ ուշադրութեան արժանացաւ Ալէքսանդրապոլից հրաւիրված Գրիգոր Տալեանի (Կօկօր) աշուղական խումբը, որը նուագեց թառի վրա և երգեց բազմաթիւ ժողովրդական երգեր։ Ուշադրութեան արժանացան նոյնպէս մեր երկու երիտասարդ երաժիշտների՝ Դեմուրեանի և Մայիլեանի ներդաշնակած ժողովրդական երգերը, որ բաւական մեծ աջողութեամբ կատարեց երգեցիկ խումբը Արշակ Լևխանեանի ղեկավարութեամբ. երգեցին «Եղսօ ջան», «Կանաչ-կարմիր» և այլն։

Երեկոյթի երրորդ բաժանմունքը ամբողջովին բաղկացած էր հայկական պարերից։ Ընդարձակ բեմի վրա մի խումբ հայ աղջիկներ և տղաներ հայկական տարազներով պարում էին թէ խմբական և թէ սօլօ պարեր։

Չափազանց մեծ ոգևորութիւն պատճառեցին աստրախանցիներին այդ պարերը. անընդհատ ծափահարութիւններով ժողովուրդը շարունակ յայտնում էր պարողներին իր գոհունակութիւնը։

Երեկոյթի այդ բաժինները վերջանալուց յետոյ՝ սկսվեցին եւրոպական պարերը, որոնք տևեցին մինչև ժամը 4-ը։

Սենեակներից մի քանիսում կային ընդարձակ բուֆետներ, որտեղ ի միջի այլոց մատակարարում էին խորոված։

Հաւաքված ահագին բազմութիւնը լաւ տպաւորութեան տակ հեռացաւ երեկոյթից։ Շնորհակալութեան արժանի է, անպայման, Գրական-Գեղարուեստական Ընկերութեան նախագահ Ռ. Աստուածատրեանը, որի անսպառ եռանդի արդիւնքն էր այդ մեծ երեկոյթը։

Միւս անգամ կը գրեմ դպրոցական ֆօնդի մասին։

Ս. Ք. Ասլանեանց

II

Հին-Նախիջևան, 28 հոկտ.

Շմահմուդ գիւղն էլ յետ չը մնաց ազգային մեծ յոբելեանը տօնելուց։

Կիրակի, ամսիս 13-ին, եկեղեցական արարողութիւններից յետոյ հասարակութիւնը հրաւիրվեց տեղիս ծխ. դպրոցը, որտեղ դպրոցի վարժուհի օրիորդ Կախեանը բացատրեց տառերի գիւտի և տպագրութեան սկզբնաւորութիւնը։ Ապա սկսվեց աշակերտական գրական հանդէսը երգեցողութեամբ։

Ի վերջոյ հանդէսը փակեց աւ.-ուսուցիչ Բ. Կախեանը, որը, բացատրելով դպրոցի նշանակութիւնն ու կարևորութիւնը մանաւանդ հայերիս համար, կոչ արեց հասարակութեանը սերտօրէն կապվել դպրոցին և անկումից պաշտպանել միշտ այն։ Հէնց այստեղ յօգուտ դպրոցական ֆօնդի հաւաքվեց 15 ր. և ուղարկվեց Էջմիածին։

Հանդէսը վերջացաւ բաւական ուշ, սակայն հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ դպրոցի սրահից։

Միք. Կիւրեղեան

III

Տաշքենդ, 25 հոկտ.

Ամսիս 13-ին տեղիս հայոց եկ.-ծխ. դպրոցի և աղօթատան բակում, պատարագից և հայրապետական մաղթանքից անմիջապէս յետոյ, տեղի ունեցաւ հայոց տառերի գիւտի և հայկական տպագրութեան յոբելեանական ազգային հանդէսը։

Թէև դպրոցի հոգաբարձութիւնը, ըստ երևոյթին, որոշել էր հանդէսը կատարել դպրոցի դահլիճում, որի համար և զարդարել էր շքեղօրէն դահլիճը, բայց սրահի փոքրութեան պատճառով տօնակատարութիւնը տեղի ունեցաւ բակում։

Բակը լիքն էր երկսեռ հասարակութեամբ և հայ աշակերտութեամբ։ Ծխատէր Մ. Ք. Տէր-Մկրտչեանը բանալով հանդէսը՝ խօսեց տառերի գիւտի և նրա նշանակութեան մասին։

Ապա խօսք առաւ գաղութիս ծխ. դպրոցի աւ.-ուսուցիչ Ա. Միրզայեանը և խօսեց տպագրութեան կատարած դերի և հայկական տպագրութեան պատմութեան մասին։

Բանախօսութիւններին յաջորդում էին դպրոցի սան-սանուհիների մանկական երգերն ու ոտանաւորները, որոնք ընդհատվում և ողջունվում էին բուռն ծափահարութիւններով։

Տօնական ծրագիրը վերջանալուց յետոյ՝ խօսեց հոգաբարձութեան ներկայացուցիչ Տիգ. Յովսէփեանը գաղութիս ծխ. դպրոցի ծագման ու զարգացման մասին, որին յաջորդեց հոգաբարձութեան նախագահ Յ. Թադէոսեան և յայտնեց, որ հոգաբարձութեան կողմից Վեհ. Հայրապետին ուղարկված է շնորհաւորական հեռագիր։

Հանդէսից յետոյ պետական դպրոցների բարձր դասատան հայ աշակերտներն ու աշակերտուհիները հիւրասիրվեցին թէյով, իսկ փոքրերը և հիւր երեխաները՝ ծխ. դպրոցի երեխաների հետ միասին՝ չոր մրգերով։ Հանդիսականները հեռացան գոհ սրտով և ուրախ տրամադրութեամբ, մանաւանդ ծնողները, որոնց երեխաները այդ հանդէսի աչքն էին իրանց երգերով ու ոտանաւորներով։

Խարփութեցի Գօգի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՏԵՐՎԻՒ

ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ

Երզրում, 17 նոյեմբերի

Ամբողջ Թիւրքիայում և մասնաւորապէս Երզրումում օրվայ մարդը ներկայումս Թիւրքահայոց նորընտիր պատրիարք Զաւէն եպիսկոպոսն է։ Երկու շաբաթ յետոյ նա արդէն Թիւրքիայի մայրաքաղաքում կը բազմի պատրիարքական գահի վրա և կը ստանձնէ ամբողջ թիւրքահայ ժողովրդի կուլտուրական, կրօնական, և մասամբ քաղաքական գործերի ղեկավարութիւնը։ Նա կը կանգնի գլուխ այն ներքին ինքնավարական փոքրիկ կառավարութեան, որը վայելում են հայերը դարերից ի վեր սուլթանների կայսրութեան սահմաններում։

Պատրիարքական ֆունկցիաները Պոլսում շատ աւելի բարդ և բարձր են քաղաքական տեսակէտից, քան Էջմիածնում ամենայն հայոց հայրապետութիւնը։

Պատրիարքի անձնաւորութիւնը իր ուղղութեան, իր տեմպերամենտի կնիքը պիտի դնի թէ հայ ժողովրդի ու թիւրք կառավարութեան միջև եղած յարաբերութիւնների վրա, թէ թիւրքահայերի կրօնական, կուլտուրական և այլ ֆունկցիաների վարչական մեխանիզմի վրա, Պոլսից մինչև Եգիպտոս ու Երզրում, Բաղդադից մինչև Վան ու Երուսաղէմ։ Որքան էլ որ թիւրքահայոց ներքին կուլտուրա-կրօնական սահմանադրութիւնը ապահովի գաւառներին որոշ իրաւունքներ, բայց և այնպէս՝ դարձեալ գաւառը այս անտէր երկրում՝ ինքնակամ հրաժարվում է շատ իրաւունքներից ու կախվում կենտրոնական իշխանութեան քղանցքներից։ Պատրիարքի անձնաւորութեան հեղինակութիւնը չէ որ ես բարձրացնում եմ դիտումաւոր կերպով՝ ի վնաս օրէնդիր իշխանութեան—կենտրոնի և գաւառական պատգամաւորական ժողովների։ Ես շեշտում եմ իրականութիւնը, որի հետ ես ինքս էլ կարող եմ համաձայն չը լինել։

Թիւրքահայ իրականութիւնը ասում է, որ պատրիարքի անձնաւորութիւնից կախված է շատ և շատ բան։ Եւ դա՛ առաւել ևս այժմ, երբ թիւրքահայ դատը դարձել է հերթական հարց եւրոպական դիպլօմատիական աշխարհում։

Ձեր թղթակիցը, խորապէս գիտակ վերոյիշեալ հարցերին, դիմեց նորընտիր պատրիարքին և խնդրեց ինտերվիւ որպէս կովկասահայ կարևոր հայ թերթի՝ «Մշակի» թղթակից։

Պատրիարք հայրը ամենայն յօժարութեամբ ընդունեց ձեր թղթակցին, իր չափազանց սուղ ժամերից բաւական խոշոր բաժին հանելով առանձին տեսակցութեան համար։

Բարեկազմ, հազիւ 40–43 տարեկան, դուրալի դէմքով ու արտաքինով, աշխոյժ և անսեթևեթ խօսուածքով և շարժ ու ձևերով, մի վերին աստիճանի հաճակրելի բնաւորութեամբ մարդ է նորընտիր պատրիարք Զաւէն եպիսկոպոսը։ Ոչ մի պաշտօնական տոն իր խօսուածքի մէջ։

⁂

Բիթլիսի բէյերը եւ շէյխերը աւելի ուժեղ են, քան կառավարութիւնը

— Ճիշդ է որ, սրբազան հայր, Բիթլիսում կառավարութիւնը լաւ չէ ընդունել ձեզ։

— Ցաւ ի սիրտ ստիպված եմ խոստովանել, որ ճիշդ է։ Թիւրք ու քիւրդ բէկերը, շէյխերը ուղղակի սպառնացել էին վալի Մազհար-բէյին, որ եթէ նա համարձակվի ընդունելութիւն սարքել, հետևանքը վատ պիտի լինի հայերի համար։ Կուսակալը համաձայնվել էր և գրեթէ ոչ մի ընդունելութիւն չարեց, բայց ամէն պատրաստութիւն տեսել էր, որ ես նախքան հայոց առաջնորդարան այցելութիւնս՝ ուղղակի գնամ կառավարչատուն։ Ես այդ չարեցի. ես ցանկացայ իմ դիրքը և իմ ժողովրդեան արժանապատուութիւնը պահպանել։ Ես ինքս էլ իմ կողմից մարդ ուղարկեցի, շնորհակալութիւն յայտնելու իր «բարի գալուստի» բարեմաղթութիւնների համար այն չափով՝ որչափով որ պահանջում էր թատրական քաղաքավարութիւնը։ Քիւրդերը և թիւրքերը ինձ Երզրումի վիլայէթում միայն լաւ ընդունեցին և դա ի հարկէ ինքնաբերաբար չէր, այլ «վերևից» այդպէս էր հրահանգված։ Քիւրդերը միշտ աշխատում էին անկեղծ ու մտերիմ ձևանալ. շատ լաւ, ուրախ եմ, բայց երանի՛ թէ նոյն վերաբերմունքը ցոյց տան նաև հայ ժողովրդեան հանդէպ ևս և միշտ։

Թիւրքերի հետ գործակցենք, բայց թիւրքական րէֆօրմները սնամէջ են

— Սրբազան հայր, ինչ է ձեր կարծիքը հայ-թիւրք գործակցութեան մասին. պարտաւո՞ր են հայերը կապել իրանց ճակատագիրը թիւրք ժողովրդի հետ։

— Կարծում եմ՝ հայ ժողովուրդը պարտաւոր է կապել իր ճակատագիրը թիւրքերի հետ այն չափով՝ որչափով որ իրական է այդ երկու ժողովուրդների բնակութիւնը միևնոյն երկրում. մենք չենք փախչում թիւրք ժողովրդեան հետ գործակցութիւն ունենալուց ամէն անգամ, երբ խնդիրը դառնայ արդարութեան, հաւասարութեան և երկիրը հարստացնելու գործի շուրջը։ Բնակակից ժողովուրդները եղբայրներ են։ Բայց եղբայր են այնքան ժամանակ՝ որքան ժամանակ որ մէկը չէ կաշկանդում միւսի ազատութիւնը, առաջադիմութիւնը։ Թիւրքական րէֆօրմները հայերի համար անօգուտ են բացարձակապէս։ Հայրենիքի փրկութիւնը պահանջում է եւրոպական կօնտրօլ, առանց դրան՝ մենք կը կորչենք։ Եթէ ազգերի եղբայրութիւն է, թոյլ չը պիտի տալ, որ մէկը կորչի։ Այս մտքերը ես միմիայն ինձանից չեմ արտայայտում. անցած ճանապարհներումս ես հանդիպեցի բազմաթիւ գիտակից, լուրջ թիւրք պաշտօնեաների և քաղաքացիների, որոնք նոյնպէս յուսահատ էին թիւրքական րէֆօրմներից և փրկութիւնը գտնում էին միմիայն եւրոպական կօնտրօլի մէջ։ Թիւրքերը իրանք շատ յաճախ զգում են այս ճշմարտութիւնը, բայց չեն զիջում խոստովանելու։

Արդարութիւն ենք ցանկանում

— Ի՞նչ ձևով ցանկանում էք լուծված տեսնել հայկական հարցը. ինչպէս գիտէք, առաջադրված կան մի քանի ծրագիրներ։

— Մեր բացարձակ պահանջն այն է, որ արդարութեան արևը փայլի մեր հայրենիքում, ինչ ձևով ուզում է թող լինի։ Մենք կարօտ ենք արդարութեան...

— Ո՞ր պետութիւնների պօլիտիկան գտնում էք հայերիս հանդէպ անկեղծ ու օգտակար։

— Բացարձակ ոչինչ չեմ կարող ասել առ այժմ, բոլոր պետութիւնների էլ պօլիտիկան բղխում է իրանց առօրեայ և առհասարակ իրանց շահերից։

— Ո՞ր պետութիւնների հիւպատոսները ցոյց տուին ձեզ լաւ ու սրտագին ընդունելութիւն Բիթլիսում և Երզրումում։

— Թէ Բիթլիսում և թէ Երզրումում ես ռուսական հիւպատոսների վերաբերմունքը գտայ շատ սիրալիր ու մտերիմ. նրանք ինձ շատ լաւ ընդունեցին, աշխատելով աւելի ևս յարգանք մատուցանել ինձ որպէս ներկայացուցչի հայ ժողովրդեան։

Յեղ. կուսակցութիւնները լաւ են, բայց անտակտ եւ անհեռատես

— Սրբազան հայր, ինչ կարծիք ունէք հայ յեղափոխական կուսակցութիւնների մասին։

— Նրանք լաւ են, նրանց գոյութիւնը օգտակար եղած է յաճախ և կը լինի դարձեալ. նրանց շարքերում կարելի է հանդիպել օգտակար ոյժերի և անձնաւորութիւնների. բայց ցաւօք սրտի պիտի խոստովանեմ, որ նրանք կատարեցին շատ մեծ և աղէտալի սխալներ։ Այդ սխալները առաջ եկան մեծերի անհասկացողութիւնից երկրի վիճակի վերաբերմամբ, և փոքրիկների դարձեալ չափազանց եռանդից։ Մեր յեղ. կուսակցութիւնները գործելու մօմենտը չը կարողացան ճանաչել, և այժմ էլ տակաւին չեն ճանաչում։ Երբեմն ի զուր տեղ վատնում են ահագին չափով էներգիա, իսկ երբեմն էլ, երբ հարկ է լինում, անտարբեր նստում են թմրած ու բէխաբար։ Պէտք է ըմբռնել ժամանակի պահանջը և ըստ այնմ գործել հարկ եղած միջոցներով։ Մեր յեղ. կուսակցութիւնները տեղի-անտեղի բռնում են որևէ տակտիկայի պոչից բոլորովին պատահմամբ. իսկ երբ տեսնում են այդ ճամբան չէր, իսկոյն փոխում են տակտիկան ըստ բաղդի բերմունքի. ո՛վ է հարցնողը, ո՛վ է փնտռողը։ Այսպիսով, ճիշդ է, նրանք տուին մի քիչ օգուտ, բայց պատճառեցին շատ մեծ կորուստներ. զոհեցին շատ թանգագին ոյժեր բոլորովին ի զուր։ Նրանք սպառեցին հայ ժողովրդի հաւատքը և ոյժը։ Շատ մեծ բաներ կան, որ կարելի է իրագործել փոքրիկ ոյժով իսկ, և շատ փոքրիկ խնդիրներ կան, որ չի կարելի լուծել խոշոր ոյժերով իսկ։ Դժբաղդաբար յեղ. կուսակցութիւնները հեռու են փախչում ազգային իշխանութիւնից, նրանք միամտօրէն պահանջում են անջատել հայ ազգի կրօնական և մարմնաւոր իշխանութիւնները մի այնպիսի երկրում, որպիսին Թիւրքիան է և որտեղ թագաւորն իսկ իր վրա միացնում է թէ կրօնական և թէ աշխարհիկ վեհապետութիւնների ֆունկցիաները միաժամանակ։ Ես ինքս հաւատացած եմ, որ կը գայ մի ժամանակ, երբ այլ ևս օրվայ պահանջ կը դառնայ այդ անջատումը, բայց այդ ժամանակը այսօր չէ. այսօր մենք կլանված ենք մեր ֆիզիքական գոյութեան իրաւունքը պահպանելու գերագոյն հարցով։

Դաշնակցութիւնը խարխափում է...

Խօսելով մասնաւորապէս Դաշնակցութեան մասին պատրիարքն ասաց.

— Դաշնակցութիւնը օգտակար ոյժ է, բայց նա յաճախ կորցնում է իր օգտակարութեան հանգամանքը՝ իր գործած սխալների հետևանքով. օրինակ, անցեալ տարիներում հրապարակ հանված դաշնակցական-իթթիհադական գործակցութիւնը վնասակար եղաւ հայ ժողովրդեան համար. Դաշնակցութիւնը վնասեց ժողովրդին իր անփորձութիւնով։ Դաշնակցութիւնը միշտ փորձում է զանազան միջոցներ գործունէութեան համար. մէկը չեղաւ, միւսին է բռնում իսկոյն։ Նա կարծես խարխափում է...

Կուսակցականութիւնը ճղճմութիւն է

— Ի՞նչ ուղղութեան կը հետևէք դուք ձեր պատրիարքական գործունէութեան մէջ, սրբազան հայր։

— Իմ ուղղութիւնը ճշմարտութեան ձայնն է և հայ ժողովրդի շահը։ Ես անկուսակցա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՐԿՈՎԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿ. ՓԱԿՈՒՄԸ

Խարկովի նահանգապետը փակել է այդ քաղաքում 50 տարուց ի վեր գոյութիւն ունեցող բժշկական ընկերութիւնը նրա համար, որ դեմօնստրատիվ կերպով հանդէս եկաւ Բէյլիսի գործում։

Ընկերութիւնը ամբողջ 50 տարի հանդիսացել է Ռուսաստանի ամբողջ հարաւի ամենակուլտուրական հաստատութիւնը։ Նա ծագել է հասարակական նախաձեռնութեամբ և չէր ստանում ոչ մի նպաստ. Նա պահպանում էր մի շարք գիտական հիմնարկութիւններ—կանանց բժշկական ինստիտուտ՝ 1500 ուսանողուհիներով, հիւանդանոց-ամբուլատորիա, Ռուսաստանում առաջին Պաստերեան ինստիտուտը, ուր օգնութիւն են ստանում Ռուսաստանի ամեն կողմից եկող հիւանդները, և բակտերիոլոգիական ինստիտուտը, որ առաջինն է Ռուսաստանում և երկրորդը՝ Եւրօպայում և որ հայթայթում է հակադիֆտէրիտային շիճուկ 58 նահանգների և շրջանների։ Ընկերութեան պատւոր անդամներ էին Բոտկինը, Վիրխովը, Րօբերտ Կօխը, Լիստէրը, Պաստերը. իսկ այժմ՝ Մէչնիկով և Էրլիխ։ Ընկերութեան գոյքը գնահատվում է 2.000,000 րուբլի։ Այդ ընկերութեան փակումը համարվում է հասարակական խոշոր աղէտ։

ՊԱՇՏՕՆԵԱՑ ՊԵՏՐՕՎԻ ՀԵՏ ՊԱՏԱՀԱԾ ԴԷՊՔԸ

Մայրաքաղաքների օրաթերթերը հաղորդում են հետևեալը.

Թէհրանից Բուխարա տեղափոխված՝ ռուսական միսիայի թարգման Ֆէօդոր Անդրէյ Պետրովը, Պետերբուրգից մեկնելով, Նիկոլայեվսկի կայարանում դուրս եկաւ իր կուպէից, բայց ուշացաւ գնացքից։ Երբ գնացքը շարժվեց, Պետրովը թռաւ III կարգի վագոնի սանդուղքի վրա։ Կօնդուկտօրը սկսեց նրան հեռու մղել, բայց նա ամուր բռնել էր դռան երկաթից։ Երբ եկաւ աւագ-կօնդուկտօրը, դիպլօմատը գանգատվեց կօնդուկտօրի վարմունքի դէմ և ներկայացրեց դիպլօմատիկան անցագիրը, որ տրված է Նորին Կայսերական Մեծութեան հրամանով, մինիստրի օգնականի ստորագրութեամբ և պետական կնիքով դրոշմված։ Օբէր-կօնդուկտօրը շպրտում է անցագիրը և ոտքի տակ տրորում։

Կլին կայարանում գալիս են ժանդարմները, դուրս են քաշում Պետրովին վագոնից և սկսում են ծեծել։ Պետրովը փորձում է հեռագիր ուղարկել արտաքին գործերի մինիստրութեան, բայց նրան յայտարարում են խելագար և ուղարկում են Տվեր, ուր և դնում են խելագարների տնակում։

Մի ամբողջ օրից յետոյ, բժիշկները բաց են թողնում Պետրովին, գտնելով նրան առողջ։

Դիպլօմատը զեկուցագիր ներկայացրեց արտաքին գործերի մինիստր Սազօնովին։ Մինիստրը պահանջեց Րուխլովից՝ կատարել տալ ամենախստագոյն քննութիւն։

Իբրև քննիչ ճան. հաղ. մինիստրութեան կողմից ուղարկվել է ժանդարմական գնդապետ Նիսկունովը։ Նիկոլայեվսկի երկաթուղային վարչութիւնը իր ծառայողներին ի հարկէ «սպիտակացրել» է։ Արդարադատութեան մինիստրը իր հերթին պատուիրել է դատախազին քննութիւն կատարել։

Յայտնի պրոֆէսորներ գտել են Պետրովին միանգամայն նորմալ և առողջ անձն։

Պետրովը ստանում է բազմաթիւ համակրական գրութիւններ։

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ

Այսօր տեղի է ունենալու Գրիգոր Շահբուդաղեանի թաղումը։

Հանգուցեալը մեր ուսուցչական և գրական ասպարէզներում անյայտ անձն չէր։ Նա եղել է նախկին Թիֆլ. Հրատ. Ընկերութեան քարտուղարը երկար ժամանակ, ինչպէս և եղել է երկար ժամանակ ուսուցիչ Ներսիսեան դպրոցում։ Կատարել է մի քանի թարգմանութիւններ, օրինակ Էբերսի «Փարաւոնի աղջիկը» և այլ եւրօպական հեղինակների գրուածները։

Ներսիսեան դպրոցում ուսուցչութիւնը թողնելուց յետոյ նա մասնաւոր գործերով էր զբաղվում։

Թողել է ընտանիքը անապահով դրութեան մէջ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ա. ՓՈՒՐՑԵԼԱՁԷԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երէկ, նոյեմբերի 6-ին, ցերեկվայ ժամը 2-ին Վրաց Ազնուականութեան Բանկի շինութեան մէջ, նոյն բանկի վարչութեան նախաձեռնութեամբ, կատարվեց հոգեհանգստեան կարգ նորոգ հանգուցեալ վրաց հասարակական գործիչ, գրականագէտ և Վրաց Ազնուականութեան Բանկի նախկին վերատեսուչ Անտօն Նիկոլայեվիչ Փուրցելաձէի յիշատակին։ Հոգեհանգստեան կարգի կատարմանը ներկայ էին բանկի վարչութեան անդամները, ծառայողները, քաղաքային վարչութեան կողմից քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը, քաղ. վարչութեան անդամ Գ. Դ. Ժուրուլին, հայ մամուլի կողմից «Մշակի» խմբագիր-հրատարակիչ Հ. Առաքելեանը, «Աղբիւր-Տարազի» խմբագիր-հրատարակիչ Տ. Նազարեանը, վրաց և ռուսաց մամուլի ներկայացուցիչները, այլև բազմաթիւ հասարակութիւն։ Հանգուցեալի յուղարկաւորութիւնն ու թաղումը տեղի կունենայ նոյեմբերի 9-ին Գօրու գաւառի Մէրէթի գիւղում։ Նրա կամքն է, որպէսզի ոչ մի պսակ չը դրվի և դամբանական չը խօսվի թաղման ժամանակ։ Վրաց Ազնուականութեան Բանկում հոգեհանգստեան կարգի կատարման ժամանակ մի քանի զգացված խօսքերով հանգուցեալին դրուատեց Վ. Կարբէլաշվիլի քահանան, որն ի միջի այլոց ցաւ յայտնեց, որ 60-ական թւականների գործիչները իրար ետևից մեռնում են, սակայն վրացի ժողովուրդը այլևս հասարակական նոր իդէալիստ ույժեր չէ արտադրում իր միջից։ Յ. Գ.

ԿՈՎԿԱՍԻ ՍԳՈՅ ԵՕԹՆԵԱԿԸ

Քանի մը օրուան մէջ կովկասահայք կորուսին տարբեր ուղղութեամբ գործող հասարական երեք հսկայ աշխատաւորներ՝ Ջաւարեանը, Քալանթարը և Խատիսեանը։ Կովկասահայ մամուլը արձագանգ տուաւ և դեռ կը շարունակէ տալ այն դառն կսկծին, որով համակուած են ոչ միայն հայ, այլ և ռուս, վրացի և իսլամ ազգաբնակութիւնը հաւասարապէս, մանաւանդ ստեղծագործող գիւղատնտես Ա. Քալանթարի անփոխարինելի կորստին առիթով։

Կը հետևիմ հայ թերթերուն և կը տեսնեմ, որ կովկասցիք իսկապէս գիտեն գնահատել հասարակական ծառայութիւնները և արժանիքները և իրենց վիշտը այնքան խոր է, որ շատեր անդարմանելի կը համարին հասած դժբաղդութիւնը։

Բայց ես, իբրև թիւրքահայ, 40 օրէ ի վեր յաջորդաբար Էջմիածին և Թիֆլիս գտնուելով և մասնակցելով մեծ յոբելեանի հանդէսներուն, ինչպէս և Կովկասի մեծ սուգին, ուրախութեամբ և սքանչացումով կը դիտեմ այն խոշոր երևոյթները, որք ի հանդէս կը բերեն յայսկոյս Արարատի բնակող հայերու մէջ կատարուած մեծ յառաջդիմութիւնը։ Ամեն տեսակէ—գրական, գեղարուեստական, գիւղատնտեսական, բարեգործական, կրթական և այլն—անթիւ հաստատութիւններ՝ մեծ մասամբ ֆոնդերով կամ կտակներով ապահովուած, հասարակական և իմացական մեծ դէմքեր, դէպի տոհմային կրթութիւն և մայրենի լեզուն ցոյց տրուած ջերմ նախաձեռութիւնը, գիւղացի ժողովրդի տնտեսական վերածնութեան համար առնուած քայլերը և վերջապէս այն համայնական և գործնական գնահատումը՝ Քալանթարի, Խատիսեանի և Ջաւարեանի գործունէութեան՝ կապացուցանեն թէ կովկասահայը համեմատութեամբ տարաբաղդ թիւրքահայոց՝ արդարև հսկայաքայլ կը յառաջդիմէ և գիտէ օգտուիլ՝ նոյն իսկ իրերայաջորդ ապշեցուցիչ աղէտներէ։

Ես կը տեսնեմ այնքան կենսունակութիւն և գիտակցութիւն՝ գրական, սեղանաւորական, առևտրական և ժողովրդական խաւերու մէջ, որ հաստատ կը հաւատամ թէ երեք հանգուցեալներու աճիւններէն իսկ պիտի ծնին շուտով նոր Քալանթարներ, նոր Ջաւարեաններ և նոր Խատիսեաններ՝ աւելի մեծ թուով։

Ուստի իմ սուգս և արտասուքս ալ միացնելով մեր կովկասահայ պատուական եղբայրներու և քոյրերու ողբին՝ և ապագայի անկեղակարծ յուսով աւլցուն՝ կը վերջացնեմ խօսքս՝ ըսելով. «Պատիւ և փառք ձեզ, որ այսչափ ազնիւ և արթուն էք, պաշտամի յարգանք՝ հասարակական անզուլ գործունէութեան երեք զոհերու անմահ յիշատակին, ամենախոր ցաւակցութիւն՝ սգաւոր երեք ընտանիքներուն, որք հանրային սոյն հոգեբուղխ արտասուքը իրական սփոփանք մը պէտք է համարին իրենց համար»։

Հիմնադիր-տնօրէն
Վանայ Երամեան վարժարանի՝
Հ. Երամեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի զանազան քաղաքներից ստացվում են յայտարարութիւններ՝ Կովկասի քաղաքային ներկայացուցիչների երկրորդ համագումարի նիստերին մասնակցելու մասին։

◆ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, ինչպէս յայտնեցինք, բժիշկների խորհրդով մնալու է անկողնում մօտ մի ամիս։ Այժմ նրա պարտականութիւնները կատարում է քաղաքագլխի անձնափոխանորդ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը։

◆ Մասնագէտ անձերից մի մասնաժողով մեկնեց նայելու նորակառոյց Կարս-Սարիղամիշ երկաթուղագիծը։

◆ Այսօր, Լ. Ն. Տօլստոյի մահվան տարելիցի օրը, Ժողովրդական Տան ռուս թատերասէրների խումբը կը ներկայացնէ անմահ գրողի «Լուսաւորութեան պտուղները» պիէսը։

◆ «З. Р.» լրագրի ասելով, Քութայիսի նահանգապետ դ. ռ. Սեավոլինսկին այս օրերս թողնում է իր պաշտօնը։ Նրա տեղ նշանակվում է Թիֆլիսի ոստիկանապետ Զասիպկինը։ Թիֆլիսի նահանգապետ Ձերնեավսկին տեղափոխվում է Ռուսաստանի ներքին նահանգներից մէկը, իսկ նրա տեղ նշանակվելու է ֆինանսների մինիստրութեան մէջ աչքի ընկնող պաշտօն վարող Լօսէվը, որ իրաւաբան է և աւարտել է զինւորա-իրաւաբանական ճեմարանը։ Թիֆլիսի ոստիկանապետի պաշտօնի համար թեկնածու համարվում է Բագուի ոստիկանապետ փոխ-գնդապետ Նազանսկին։

◆ Գայիանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ յայտարարել «Մշակի» միջոցով, որ նոյեմբերի 10-ին, կիրակի, պատարագից յետոյ, Մողնու եկեղեցու բոլոր իրաւատէր ծխականները ժողովի են հրաւիրվում։ Ծխական ժողովի զբաղմանց մանրամասնութիւնները յիշատակված են թերթիս մէջ զետեղված յայտարարութեան բաժնում։ Մասնաւոր հրաւիրաթերթեր ոչ ոքի չեն ուղարկվի։

◆ Հայուհեաց Որբախնամ Ընկեր. վարչութիւնը խնդրում է մեզ տպել, որ ինքն շնորհակալութեամբ ստացել է նուէր Դ. Աւան-Իւզբաշեանի ընտանիքից մի հարիւր րուբլի՝ հանգուցեալ Կ. Փիթոյեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն։

◆ Ի նկատի ունենալով, որ Թիֆլիս քաղաքի 1914 թւի նախահաշւի քննութիւնը կը պահանջէ դումայի մի քանի նիստեր, որոշված է նշանակել դումայի նիստերը շաբաթական երկու անգամ։

◆ Ֆունիկուլէրի վագոնների երթևեկութիւնը ներկայումս կատարվում է առ. ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։

◆ Կարսից մեզ գրում են. «Նոյեմբերի 3-ին Ս. Ջաւարեանի և Ա. Խատիսեանի համար հոգեհանգիստ կատարվեց։ Նոհրատեան, Ջամբազեան և Մկրտումեան ծանօթացրին ժողովրդին հանգուցեալների գործունէութեանց հետ»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ԳԷՕԹԷԻ «ՖԱՈՒՍՏԸ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՄԻ ՎՐԱ *)

Գէօթէի «Ֆաուստը» համաշխարհային գրականութեան մէջ այն հանճարեղ գրուածքներից մէկն է, որի ստեղծագործութիւնը բանաստեղծից խլել է նրա կեանքի ամբողջ մի քանի տասնեակ տարիները։ Այն մտքերն ու զգացմունքները, այն ձգտումներն ու տենչերը՝ իրանց ուրոյն երանգներով, որոնք յատուկ էին XVIII դարի եւրօպական հասարակութեան, մանաւանդ գերմանական Sturm und Drang շրջանին, գրեթէ ամբողջովին իրանց անդրադարձումը գտել են այդ նշանաւոր ողբերգութեան մէջ։

Գէօթէի «Ֆաուստի» հիմքը՝ դա միջնադարեան կրօնական լեգենդայի այն հերոսն է, որի հոգու այրող տենչն է եղել՝ գտնել կեանքի գաղտնիքը, զգալ նրա հաճոյքը, թափանցել նրա էութեան մէջ։ Վառված գիտութեան անյագ տենչանքով, նա հրաժարվում է Քրիստոսից ու իր հոգին վաճառում սատանային, որը և որոշված պայմանաժամին գալիս է ու նրա հոգին տանում դժոխքի խաւար թագաւորութեան խորխորատը։

Օգտվելով ժողովրդական այս նշանաւոր լեգենդայից, Գէօթէն խորացրել է նրա բովանդակութիւնը, հաղորդել է նրան ժամանակակից կոլորիտ, տեղաւորելով այն՝ գեղարուեստական ըստ ամենայնի վեհեցիկ ձևի մէջ։

Սակայն Գէօթէի «Ֆաուստը» առաւելապէս փիլիսոփայական ողբերգութիւն է, մի գրուածք, որի շուրջը մինչև այժմ էլ չեն դադարում քննադատութիւններն ու ուսումնասիրութիւնները՝ փիլիսոփայական, պատմական և գեղարուեստական տեսակէտներից։

Գէօթէի Ֆաուստը մի նշանաւոր գիտնական է. նա իւրացրել է իր ժամանակի բոլոր գիտութիւնները։ Շրջապատված բազմահատոր գրքերի անթիւ կոյտերով, նա խորապէս ուսումնասիրել է փիլիսոփայութիւնը, բժշկութիւնը, իրաւագիտութիւնը, աստուածաբանութիւնը. նա իր ամբողջ կեանքը մաշել է կեանքի իմաստը գտնելու համար, կմախք է դարձել անթիւ գրքերի շնորհիւ, սակայն նրա հետախուզող միտքը ոչ մի մխիթարական կէտի չէ յանգել. Ֆաուստը զգում է իրան իբրև մի ողորմելի, սահմանափակ արարած, որի ծնունդն էլ անմտութիւն է, մահն էլ։

Եւ երբ նա համակված ծայրայեղ պեսիմիզմով, հիասթափված մարդկային գաճաճութեամբ՝ դիմում է Երկրային Ոգու օգնութեան, վերջինիս հանդէս գալը իր խորհրդաւոր հոյակապ ամբողջութեամբ աւելի ևս կատարեալ է դարձնում կասկածամիտ ծերունու յուսահատութիւնը։ Նա զգում է, որ մարդու բնութիւնը օժտված է երկու իրար ժխտող տարրերով. մի կողմից կեանքը իր ամուր շղթաներով կաշկանդել է նրա թշուառ գոյութիւնը, մինչդեռ նրա միտքը, նրա ամբողջ էութիւնը տենչում է անհուն եթերները սաւառնելու անզուսպ տենչերով։ Իր աչքում Ֆաուստը մերթ աստուածութեան գերագոյն պատկեր է, մերթ փոշու մէջ սողացող մի չնչին որդ։ Իր ոչնչութեան, ողորմելիութեան գիտակցութիւնը, ապա և հետախուզող, որոնող միտքը, կեանքի հաճոյքը լիակատար կերպով վայելելու ցանկութիւնը նրան վերջ ի վերջոյ մղում են դէպի սատանան (Մեֆիստոֆէլ) — դարերի ընթացքում երկրային կեանքի ու վայելքի մարմնացումն համար-

---

*) Միայն առաջին մասը, 17 պատկերով և նախերգանքով։

կան եմ, անկախ մտածող. ես կողմնակից եմ արդարութեան։ Բոլոր հայերը իմ եղբայրներն են։ Իմ կարծիքով՝ կուսակցականութիւնը նեղմտութիւն է, որովհետև կը լինեն դէպքեր ու ժամանակներ, երբ ստիպված պիտի լինես, ստիպված պիտի լինես հետևել կուսակցութեան օրէնքին. և դա յաճախ արվում է արդարութիւնը կոխկրտելու գնով։ Ես անկարող եմ լինել կուսակցական, այդ բառի ներկայումս հասկացված մտքով, որովհետև իմ խարակտերիստիկան այդ ուղղութեամբ չէ դարբնվել։ Ես անկարող եմ լինել կուսակցական, որովհետև շատ խնդիրներում պատահում է, որ անհամաձայն լինեմ. ես չեմ ուզում կաշկանդել ինձ նեղ մտքով։ Իմ ուղղութիւնը, իմ նպատակը պիտի լինի — թէկուզ առաջադիմական, պահպանողական կամ չափաւորական—ամեն գնով և ամեն բանից առաջ ապահովել հայ ազգի գոյութիւնը իր բոլոր ֆունկցիաներով՝ կուլտուրական, ֆիզիքական, քաղաքական և այլն։ Այդ բանի համար ո՛ր ուղղութիւնը և ո՛ր միջոցները որ հարկ լինեն, ես դրան եմ կողմնակից, ես այդ ուղղութեանն եմ հետևելու։ Ես սիրում եմ իմ եկեղեցին որպէս հայ և որպէս կղերական. որքան էլ որ ասում են և թէկուզ օրինական լինի եկեղեցին աշխարհիկ գործերից բաժանելու պահանջը—որը անշուշտ մի օր պէտք է իրականանայ—բայց ներկայումս Թիւրքիայում հայ եկեղեցին մեր ազգի գոյութիւնը պահպանող փակտորներից մէկն է և, որպէս այդպիսին, պէտք է մնայ նա, և ես նրան աւելի եմ սիրում։

Դպրոցը խարիսխն է մեր գոյութեան

— Հետաքրքրական էր գիտենալ, թէ պատրիարք հայրը ի՞նչ կը խորհի թիւրքահայոց կրթական գործի մասին։

— Դա մեր գոյութեան հարցն է. Կոնստանդնուպոլիսը մինչև այսօր անտես է արել գաւառը. գաւառը ևս իր հերթին անտես է արել իրա շրջաններին ու գիւղերին։ Բայց, ըստ իս, կրթական գործը պէտք է տանել կատարեալ ֆեդերատիվ հիմքերի վրա. Կ. Պոլիսը այլ պահանջ ունի, գաւառական գիւղը՝ այլ. միևնոյն ծրագիրը անհամապատասխան է։ Դժուար է հայ ազգի համար պատրաստել մի օրինակ կրթական ծրագիր։ Մի բան միայն անհրաժեշտ է. դա այն է, որ ամեն քաղաք ու շրջան և ամեն գիւղ պէտք է իր միջոցները տրամադրի կրթական գործին։ Այդ ուղղութեամբ ես աշխատելու եմ անել իմ ձեռքից եկածը։ Գալով այն բանին թէ օտար լեզուներից ո՛րը օգտակար է մեզ հայերիս համար, ես գտնում եմ, որ դա ռուսերէնն է. նա աւելի օգտակար է, քան գերմաներէնը կամ անգլիերէնը։ Ես ինքս նոյն իսկ թիւրքերին խորհուրդ եմ տուել իրանց պետական և այլ դպրոցներում աւանդել ռուսերէնը. մարդ ամենից առաջ պէտք է սովորի իր բարեկամների և թշնամիների լեզուները։ Խօսելով մասնաւորապէս հայ լեզուի մասին, ես գտնում եմ որ կարևոր է և շատ ցանկալի՝ թիւրքահայերի մերձեցումը ռուսահայ գրականութեան. ռուսահայ գրականութիւնը աւելի բովանդակալից է և լուրջ, քան մերը՝ թիւրքահայկականը։ Օտար դպրոցները, կանգան միսիոներութիւնների ձեռքով հաստատված մեր երկրում, վնասակար են մեր ազգի գոյութեան համար. նրանք ամենից առաջ և կարծեք գիտումնաւոր, աշխատում են չորացնել հայ մանուկի սրտում ազգային գիտակցութեան ոգին։ Հայ մանուկը իր նախնական կրթութիւնը պէտք է ստանայ հայ վարժարանում, դրանից յետոյ՝ օգտակար կարող է լինել օտար բարձրագոյն դպրոցը։ Սղերդում հայերը չեն իմանում հայերէն խօսել, նոյնպէս և Դիարբեքիրի մօտ, հարաւային կողմում, Մարդին քաղաքում բոլոր հայերը խօսում են արաբերէն. դա նրանց մայրենի լեզուն է. հայերէնը նոյնիսկ չեն հասկանում։ Այժմ այդ տարօրինակ հայերը յարում են բողոքական, կաթոլիկ միսիոներութիւններին։ Բազմաթիւ են հայեր, որոնք ժխտում են իրանց հայ լինելը, նոյնիսկ վիճում են միամտօրէն։ Մարդին քաղաքի հայութիւնը խմբովին գաղթել է Սասունից արաբական արշաւանքների ժամանակ։ Ահա այսպէս են կորչում հայերը, անտէր, անտէրունչ և մենակ։ Պէտք է օգնութեան կանչել բոլոր տեսակի միջոցները, որոնք կարող են նպաստել մեր ազգային ամբողջութիւնը պահպանելու գործին։

Սանասարեանի խնդիր

— Ես գտնում եմ, որ,—ասաց պատրիարքը,—խնամակալութիւնը բաւականաչափ իրաւունք ունէր Սանասարեան վարժարանը տեղափոխելու Էրզրումից։ Ահա 30 տարի է, որ Սանասարեանը Էրզրումում է եղել և չէ տուել ցանկացված արդիւնքը։ Խնամակալութիւնը յարմար է գտել տեղափոխել։ Էրզրումցին նախ քան Սանասարեան վարժարանի հիմնումը, ունէր սեփական միջնակարգ վարժարան. նա այժմ էլ կարող է ունենալ, եթէ ուզենայ։ Բայց կախվել են կտակի ծայրից և «իրաւունք» պահանջում. բայց ի՞նչ իրաւունքի խնդիր կայ. ձրիակերութեա՞ն... Անհրաժեշտ է, որ Էրզրումցին ունենայ իր սեփական միջնակարգ վարժարանը։

Լաւ է, բայց քաղաքական պայմանները...

— Ես ջերմ կողմնակից եմ թիւրքահայոց ազգային սահմանադրութեան բարեփոխմանը, բայց առ այժմ քաղաքական պայմանները նպաստաւոր չեն, մնում է մեզ քարշ տալ եղածը, մինչև յարմարաւոր րոպէն։

Պէտք է բարեկարգել հայ եկեղեցին

— Կրօնը ընդհանուր է. նա բոլոր ժողովուրդների մէջ երևան է եկել միևնոյն պայմանների շնորհիւ. բայց նա բղխելով միևնոյն աղբիւրից՝ հետզհետէ ազգայնանում է, ընդունում է ազգային գոյն, դառնում ազգի հարազատ ստեղծագործութիւնն ու սեփականութիւնը։ Հայ եկեղեցին հին դարերի կերտուածքն է. մենք նրան ժառանգեցինք հին անցեալից. նա կառուցված է հին ըմբռնումների վրա, մանաւանդ նրա օրէնքով տաղերը։ Այժմ այդ կառուցուածքը անհամապատասխան է ներկայ լուսաւորված դարի ըմբռնումներին. կողմնակից եմ նրա արտաքին ձևերից շատ բան բարեփոխելու հոսանքին։ Բայց նկատի առէք, որ այդ քայլը կարող է բանաւոր և օգտակար լինել միայն այն ժամանակ, երբ նրանից առաջ՝ մենք բարեկարգած կը լինենք կղերական դասը, այսինքն երբ կունենանք զարգացած կղերականների դասակարգ։ Նա միայն ընդունակ է իրականացնելու հայ եկեղեցու ցանկալի բարեփոխութիւնը։ Առանց այդ նախապայմանին արված քայլը որևէ օգտակար արդիւնք չի ունենայ։ Ես հակառակ չեմ աւետարանի աշխարհաբար թարգմանութեան, բայց երբ մեր դպրոցներում գրաբարը սովորեցնելը դասենք օգտակար որպէս մեր ազգային լեզուն, որպէս մեր աշխարհիկ լեզուի ակն ու աղբիւրը, այդ դէպքում մեր ժողովուրդը պիտի կարողանայ հասկանալ նաև գրաբար աւետարանը. արդէն նա շատ պարզ լեզուով է գրված։ Բայց էլի կրկնում եմ, ես հակառակ չեմ աշխարհաբար աւետարանին։

Քահանաների կրկնամուսնութիւնը

— Սրբազան հայր, համաձա՞յն էք քահանաների կրկնամուսնութեան խնդրին։

— Քահանաների կրկնամուսնութիւնը օրվայ հարց է եղել աւելի Կովկասում, քան մեզանում, որովհետև այդտեղ հարցը հարուցանողները կատարված բազմաթիւ զեղծումներն են։ Եթէ ժողովուրդը նկարագրի տէր մարդկանց ընտրի քահանայ, այդ հարցը կը չքանայ։ Իմ կարծիքով, կին փոխելը առաջ է գալիս զգացումի պակասից, նկարագրի թուլութիւնից։ Եթէ մի մարդ ուխտել է մինչև մահ ապրել մի որևէ կնոջ հետ, ի՛նչ գնով էլ լինի, նա պիտի պահի իր ուխտը. սիրոյ վեհութիւնը հէնց դրանումն է։ Եթէ մի քահանայ չէ կարող ըմբռնել սիրոյ մեծութիւնը, ի՞նչ կարող է նա սիրել իր ժողովրդին անխախտ ու հաստատուն կամքով։ Ես խօսում եմ տեսականօրէն, բայց գործնականի մէջ այդ հարցը ունի դժուարութիւններ։ Հին ժամանակ այրի քահանան պարտաւոր էր գնալ վանք. բայց այժմ այդ անհնար է. մնում է ընտրել երկու չարեաց փոքրագոյնը. պէտք է կրկնամուսնութեան խնդիրը լուծել դրական մտքով։

Ես ասկետիկ եմ...

— Ես կողմնակից եմ կուսակրօնութեան. ճիշդ է, դժուար է, բայց նկատի ունեցէք, որ այդ կոչումը ստանձնում են շատ քչեր, և պէտք է որ ստանձնեն անձնուէրները միայն։ Նրանք պէտք է նուիրվեն ազգին. միտքը երբ գրաւվի ազգի ցաւերով ու կարիքներով, էլ կը մոռանայ աշխարհի հաճոյքները. ես ասկետիկ եմ և գտնում եմ, որ ազգին լաւ նուիրվելու համար պէտք է ընտանիք չունենալ, որովհետև դա խանգարում է անձնուիրութեան. դա անհատի սէրը կիսում է. նա կապ է աշխարհի և անհատի միջև. դա չը պէտք է լինի, որպէս զի անձնուիրութիւնը կատարեալ դառնայ։

— Բայց, սրբազան հայր, —դիտել եմ տալիս,—ահա աշխարհի բոլոր գործերը կառավարողները՝ մինիստրները, պրոֆէսորները, ժողովրդական յեղափոխութիւնների հերոսները, բոլոր մեծ և անձնազոհ զօրավարները, բոլորը, բոլորը ամուսնացած են, և դա երբէք պատճառ չէ եղել, որ նրանք նոյնիսկ յաճախ գիտակցօրէն չը դիմեն մահվան գիրկը, և նուիրվեն ժողովրդին շատ աւելի լաւ, քան եկող գնացող կուսակրօն եկեղեցականների ամբողջ երամը։ Սպանելով բնութեան ձայնը՝ դուք ոճիր էք գործում կեանքի և նրա իմաստի դէմ։

Իմ խօսքերին սրբազան հայրը նոր առարկութիւն չէ անում, կրկնում է նոյնութեամբ իր վերոյիշեալ խօսքերը մեքենականօրէն և ապա մնում է լուռ, մտածկոտ...

Իրական դարման եւ ոչ թէ խրատ

— Ի՞նչ միջոցներով, սրբազան հայր, մտածում էք դարման անել գաղթականութեան չարիքի դէմ։

— Խրատը օգուտ չունի. ժողովուրդը իրական գործ է պահանջում. երբ կը լուծվի հայերի հողային հարցը նպաստաւոր կերպով, երբ մանաւանդ մեր երկրում կիրագործվեն ճշմարիտ ռեֆօրմներ, այն ժամանակ միայն կարող է ինքնաբերաբար դադարել գաղթականութիւնը, այն ժամանակ վստահ՝ նորից հայը չի դուրս գնայ իր հայրենիքից. իսկ այժմ...

⁂

Իմ ինտէրվիւն արդէն տևել էր 1½ ժամից աւելի։

Շնորհակալութիւն եմ յայտնում սրբազանին և մեկնում։

Նա ինձ ճանապարհ դրեց մեղմ, անուշ ու բարեհոգի, բայց աշխոյժ ժպիտով։

Կ.

վող այդ ույժին—որին վաճառելով իր հոգին՝ փոխարէնը նա ստանում է երիտասարդութիւն և սէր։ Բայց Ֆաուստը դրանով չէ երջանկանում. Նրա ողբերգութիւնը աւելի եւս կրկնապատկվում է. Նոյն իսկ աշխարհային կեանքի հետ կապված այդ բնական վայելքը (սէր դէպի Մարգարիտը) Նրան խճճում է կամայ թէ ակամայ կատարված մի շարք ոճիրների ցանցում, պատճառելով Նրա հոգուն անհուն տառապանք ու վիշտ։ Ֆաուստը կրկին մնում է երկմըտութեան մէջ, կրկին Նրա հոգին ալեկոծվում է նոր որոնումների թափով, և նա գնում է այդ որոնումների ետևից…

Սրանով վերջանում է «Ֆաուստի» առաջին մասը, որը նոյեմբերի 4-ին Հայոց Դրամատիկական Ընկերութեան խումբը ներկայացրեց Արտիստական թատրոնում։

Ֆաուստի չափազանց բարդ հոգեբանութիւնը, Նրա բնութեան երկւութիւնը, Նրա հոգեկան աշխարհի խորութիւնը, որտեղ անդրադարձումն է գտնում XVIII դարի եւրօպական կեանքի մի ամբողջ դարաշրջան, արտայայտելու համար՝ որքան խոշոր ձիրք, այնքան էլ խորը ուսումնասիրութիւն են պահանջում դերասանից։ Եթէ մենք ի նկատի ունենանք այս բոլոր պայմանները, որոնք «Ֆաուստը» ներկայացնելու համար տարրական լինելով հանդերձ՝ դերակատարի համար չափազանց դժուար իրագործելի են, և համեմատենք Գեօթէի «Ֆաուստը» հայ դերասանական խմբի «Ֆաուստի» հետ, մենք կը գանք չափազանց տխուր եզրակացութեան։

Զարիֆեանը կատարում էր Ֆաուստի դերը. նա խմբի խելացի, բարեխիղճ, ընդունակ դերասաններից մէկն է. սակայն նրա ծերունի Ֆաուստը անաջող էր միանգամայն։ Ո՞ւր էր գիտութեան ու խորհուրդների մաքի բեռան տակ կորացած, կմախք դարձած ծերունի Ֆաուստը. ո՞ւր էր նրա խորունկ վըշտի, յուսահատ մտորումների, վեր խոյացող յանդուգն մտքերի արտայայտութիւնը. ո՞ւր էր բնութեան մարմնացման՝ Երկրային Ոգու առաջ իր գաճաճամտութեամբ կծկված թշուառ ծերունու ողորմելի պատկերը։ Բեմի վրա յանձին դերակատար Զարիֆեանի այդպիսի Ֆաուստ գոյութիւն չունէր։ Զարիֆեանը չէր ըմբռնել Ֆաուստի դերը, չէր ըմբռնել Գեօթէի ամբողջ ողբերգութեան ոգին. Ֆաուստի բարդ հոգեբանութիւնը Նրա համար մնացել էր որպէս մի գաղտնիք։ Նա ընդունել էր կեղծ տոն. այդ տոնը մաշված, հինված. Ֆաուստի համար չափազանց առոյգ էր, ինչպէս առոյգ ծերունի էր Զարիֆեանի Ֆաուստը թէ գրիմով և թէ շարժումներով։

Այլ էր սակայն Զարիֆեանը երիտասարդ Ֆաուստի դերում, գլխաւորապէս վերջին պատկերում, բանտի մէջ։ Այստեղ նա կարողացաւ վերարտադրել հոգեբանական մի քանի գծեր, որոնք իրանց արտայայտութեան մէջ մի երկու դէպքում նոյն իսկ նուրբ երանգաւորում ստացան։ Սակայն… պիէսի միւս 16 պատկերներն այդ մէկ պատկերով չեն փրկվում խորտակումից, ինչպէս մէկ ծաղկով գարունը եկած չենք յայտարարում։ Ֆաուստից յետոյ ողբերգութեան մէջ նշանաւոր դէմք է Մեֆիստոֆելը։ Դա՝ ժխտողականութեան մարմնացումն է։ Նրա ձգտումն ու նպատակն է և կործանել, ժխտել ամեն ինչ, հրել մարդուն դէպի ոճիր ու դժբաղդութիւն և ապա դառն կերպով ծիծաղել Նրա վրա։

Մեֆիստոֆելի դերը կատարում էր պիէսի թարգմանիչ*) Սեւումեանը, որը միևնոյն ժամանակ նաև խմբի ռեժիսորն է։ Մեզ թւում է, որ դերակատարը ոչ միայն անաջող կատարեց դերը, այլ և միանգամայն ոչընչացրեց այն։ Մեֆիստոֆելի անբաժան յատկութիւնը և արժանիքը նրա ժխտողականութեան հետ կապված կծու սարկազմն է, դառն իրօնիան, չար նենգութիւնը։ Մինչդեռ Սեւումեանի Մեֆիստոֆելը ոչ միայն զուրկ է այդ յատկութիւնների գոնէ թոյլ պատճէնը լինելուց, այլ ներկայացնում էր խեղճ սատանայի կատարեալ հակապատկերը. Նրա Մեֆիստոֆելը մի ողորմելի տարտամութիւն էր, մի թուլամորթ արարած, որի համար վճռական գործողութիւն ասած գոյութիւն չունէր։ «Սատանայական» չարանենգութեան, խորամանկութեան, սպանիչ հեգնութեան ոչ մի նշոյլ չը կար Նրա դէմքին։ Գուցէ Սեւումեանը կամեցել էր Մեֆիստոֆելին աւելի խելքի ու բանականութեան տարրեր հաղորդել, սակայն այդ էլ նրան չէր աջողվել. Նրա գրիմն ու դէմքի արտայայտութիւնը միանգամայն այլ բան էին ասում։

Անաջող և կատարելապէս անաջող էր վհուկը իր խորհրդաւոր բնավայրում։ Միջնադարեան վհուկի դերը կատարելու համար բաւական չէ տարօրինակ շարժումների իմպրօվիզացիայի դիմելը. կախարդութիւնը միջին դարերում իր ամբողջ պատմութիւնը ունի. չէ կարելի զանց առնել այն, երբ նման մի ամբողջ պատկեր դրվում է բեմի վրա։

Տարօրինակ և անբնական էր մահացու վէրք ստացած Վալենտինի մահը, որը իր ամբողջ մօնօլօգը արտասանեց գետնի վրա անշարժ թեք ընկած, առանց մի որևէ ջղաձգութեան, առանց որևէ տառապանք արտայայտելու։

Բաւարար կարելի է համարել միմիայն տ. Ադամեանի խաղը Մարգարիտի դերում, որը առաւել ուժգին թափ ստացաւ վերջին պատկերի մէջ, միակ պատկերը, որ բաւարար էր բոլոր 18 պատկերների մէջ. մասամբ կենդանի անցաւ նաև Աւէրբախի գինետան պատկերը։

Բեմյարդարութիւնը նոյնպէս զուրկ չէր աչքի ընկնող մի քանի դէֆէկտներից. գերմանացի Գրետխենի սենեակը աւելի պարսկական բնոյթ ունէր, քան գերմանական։

Ողբերգութեան մէջ եղած սիմվօլիկ պատկերները չափազանց իրական էին, իսկ իրականները՝ ըստ ամենայնի ճապաղ։

Պիէսում հանդէս բերված ամբոխը կարևոր մօմենտներից երկուսի մէջ մեծ անպատրաստութիւն ցոյց տուեց. Մարգարիտի ուշաթափութիւնը եկեղեցում և Վալենտինի անակնկալ մահվան պատկերը կարծես խպառ չը յուզեց Նրան։

Վերջացնելով մեր րեցենզիան, չենք կարող յամենայն դէպս չընդգծել ռեժիսորի և վարչութեան գրական ձգտումը՝ դնել հայ բեմի վրա երբեմն եւրօպական կլասիկ պիէսներ. բայց նրանց վրա ծանր պարտականութիւն կայ նախ հաշւի առնել իրանց տրամադրութեան տակ եղած ույժերն ու միջոցները և ապա հրապարակ գալ թատրօնական սուտ հասարակութեան առաջ։

Սուրխաթեան

—

Այս պիէսի մասին մենք ստացել ենք Շիրվանզադէի մի գրական քննադատութիւնը, որը լոյս կընծայենք մեր վաղվայ համարում։

---

*) Թարգմանել է ռուսերէնից՝ կրճատումներով։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 4 նոյեմբերի

Հայոց Ազգագրական Ընկերութեան խորհուրդը խորին շնորհակալութիւն է յայտնում պ. Աստուածատուր Վաչեանին, որ հաճեց ընկերութեանս «Նիւթեր հայ մելիքութիւնների համար» հրատարակութեան ամբողջ սերիայի ծախսը իր վրա վերցնել, և պ. Վահագն Վարդանեանին, որը ի յիշատակ հանգուցեալ Գրիգոր Տէր-Ցարութիւնեանի նուիրեց վերջինիս ամբողջ գրադարանը և Ս. Նազարեանի, Պ. Շամշեանի, Ծերենցի, Մ. եպ. Մուրադեանի և ուրիշների նամակները։

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան
Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեան

—

Թիֆլիս, 6 նոյեմբ.

Թոյլ տուէք ձեր յարգելի թերթի միջոցով յայտնել մեր խորին շնորհակալութիւնը այն բոլոր անձանց և հիմնարկութիւններին, որոնք իրանց ցաւակցութիւնն են յայտնել մեր դժբաղդութեան առիթով։

Մ. Խատիսեան, Ա., Գ. և Լ. Խատիսեաններ և Ն. Ալիբէգեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑԱՐՄԱՐ ԱՌԻԹ Է

Ուրմիա, 18 հոկտ.

Ուրմիայում հայերի թիւը մօտ 65 տուն է հաշւվում. դրանցից մեծ մասը եկւորներ են, գլխաւորապէս Սալմաստից և Թաւրիզից։ Նրանք պարապում են վաճառականութեամբ։ Նրանց առևտուրի, արդիւնաբերութեան և այլն մասին թողնելով մի ուրիշ անգամի, առ այժմ մի քանի խօսք այստեղի դպրոցի մասին՝ տառերի գիւտի և տպագրութեան տօնի առիթով։

Ուրմիայի հայերը, չը նայելով որ ուրիշ շատ տեղերի դպրոց պահող հայերից նիւթապէս բարձր են և կարող, բայց մինչև օրս ոչ կանօնաւոր դպրոց են ունեցել և ոչ էլ դպրոցի սեփական շէնք։ Անուրանալի է, որ դպրոցական շէնքի գոյութիւնը մի պատկառելի խթան է մանուկ սերնդի կրթական գործի ապահովութեան տեսակէտից։ Առանց վերապահութեան կարելի է ասել, որ դըպրոցական սեփական շէնքը կիսով չափ ապահովում է կրթութեան, դաստիարակութեան գործը։ Այդ պէտք է մանաւանդ Ուրմիայի պէս մի տեղում, ուր աշխարհածանօթ կաթօլիկներն ու բողոքականները իրանց ցանցերն են հիւսել և անխտիր որսում են ասորի, պարսիկ և… հայ։

Անցեալում յաճախ դպրոցը տարիներով փակ է եղել. մի՞թէ նոյնը տեղի կունենար, եթէ Ուրմիայի հայը ունենար իր դպրոցական շէնքը. ի հարկէ ոչ։ Նրա դատարկ գոյութիւնը գոնէ կարող էր ծնողների խիղճը տանջել, ամաչեցնել։ Բայց որովհետև այդ չէ եղել, հայ ժողովուրդը ստիպված է եղել իր զաւակներին ուղարկել կաթօլիկների և բողոքականների դպրոցներն ու նրանց ասորի և պարսիկ «աշակերտների» կողքին նստեցնել. այստեղ արդէն չարիքը գերազանցել է բարիքին։

Ներկայ հոգաբարձութիւնը - պ. պ. Յովսէփ Շահգելդեան, Արիստակէս Միրզաջանեան և Խոսրով Աւագեան—ընտրված է տեղական լաւ և վստահելի ույժերից. Նրանք անշուշտ մտահան չեն անում Ուրմիայի դպրոցի անմխիթար անցեալը և ոգի ի բռին կաշխատեն կրթական գործը հաստատուն հիմունքների վրա դնելու. դրա համար, ինչպէս ասացինք, ամենից առաջ պէտք է ունենալ ուսումնարանի սեփական շէնք. առանց դրան, մեր կարծիքով, նոյնը կը լինի, ինչ որ եղել է անցեալում, գուցէ և աւելի վատ։

Արդ, ընդունելով որ տառերի գիւտի և տպագրութեան յիշատակը ամեն մի հայի սրտին չափազանց մօտ է, հարազատ է, պէտք է օգտվել, շատ յարմար առիթ է։ Ուրմիայի հայը ձեռք-ձեռքի տուած իր ընտրած վստահելի հոգաբարձութեան հետ՝ թող այդ սրբազան յիշատակն յաւերժացնի մի յարմար դպրոցական շէնքով. դա կը լինի միևնոյն ժամանակ ուրմիացիների համար մի պարծանք, պատիւ՝ այդքան տարբեր ազգութիւններով լցված մի քաղաքում. իսկ երբ չունեն՝ ամօթ է նրանց համար։ Այդ գործի համար շատ բան է սպասվում նաև տեղիս երիտասարդութիւնից։ Ահա մի գեղեցիկ, շատ գեղեցիկ ֆօնդ։

Դրա հետ պիտի արձանագրենք մի ցաւալի և փխաակար երևոյթ։ Այն՝ որ այս տարվայ դպրոցի 2000 թուման բիւջէն (թումանը՝ մօտ 1 ր. 75 կ. է) կազմված է միայն մի քանի աչքի ընկնող գիտակից անձնաւորութիւնների նպաստներից, այնպէս որ դպրոցը պահում է ոչ թէ ժողովուրդն ինքը, այլ մի քանի անձնաւորութիւններ։ Դա ոչ թէ նրա համար, որ չեն կարող վճարել կամ չունեն, այլ նրա համար, որ Ուրմիայում հայոց ծխ. դպրոց չը լինի։ Դրա փոխարէն՝ ուզումէին պրօգիմնազիա բանալ։ Այդ մի մասը համաձայն չէ նոյնիսկ հայոց դպրոցում տեսնել հայկական կրթութիւն ստացած ուսուցիչներ։ Սա ուղղակի ազգատեաց, ծիծաղելի ցուցամոլութիւն է։ Մի հասարակ ծխ. դպրոց պահելու անկարող հասարակութիւնը (բացառութիւնները յարգելի են) ինչո՞վ պիտի կարողանայ պրօգիմնազիա պահել։ Նա որ իր ունեցածի արժէքը չը գիտէ, ուրիշինի արժէքը երբէք չի կարող գիտենալ։ Նոյնիսկ մէկը իր ցուցամոլութեան մէջ այնքան առաջ գնաց, որ «արհամարհեց» հայոց ծխ. դպրոցը, որը բաւական կանօնաւոր հիմքերի վրա է դրված, և Թիֆլիսից սոսկ ռուսերէնի համար մասնաւոր դասատու հրաւիրեց։ Մի շատ վատ, պախարակելի օրինակ, որից վարակվում են և իր նմանները։ Ուրիշ բան է, եթէ երեխաներին դպրոց ուղարկէ և զուգընթացաբար միաժամանակ տանը ուսուցիչ պահէ։ Դա այն պարոններից է, որոնք միշտ բղաւում են թէ՝ «Ուրմիայում հայոց ծխ. դպրոց չը պիտի լինի»։

Համլիկ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կիէվում Զայցեվի գործարանի մօտ գտնվեց մի մարդու դիակ։ Իսկոյն լուր տարածվեց, թէ Բէյլիսին մորթել են։ Յետոյ պարզվեց, որ Բէյլիսը կենդանի է։

◆ Իւշչինսկիի իսկական սպանողներին որոնելու համար Պետերբուրգից ուղարկվում են յատուկ փորձված լրտեսներ։

◆ Մոսկվայի հողաբարեկարգութեան համագումարը փակվելուց առաջ ի թիւս այլ բանաձևերի ցանկալի է գտել զեմստվային հաստատութիւններ տեսնել Կովկասում տեղական բամբակագործութիւնը զարգացնելու համար։

◆ Լօձից հեռագրում են, որ Պետրովսկ գնալիս ժող. լուս. մինիստր Կասսօյի կառքը տակովն արաւ մի սայլակ, որի մէջ նստած գիւղացին վիրաւորվեց, սայլակի ձին հաշմանդամ դարձաւ, իսկ սայլակն էլ ջարդվեց։ Մինիստրը կարգադրեց բժշկական օգնութիւն ցոյց տալ վիրաւորին և վճարել վնասները։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը կից հաստատված է յատուկ յանձնաժողով այլազգի դպրոցների մասին օրինագիծ մշակելու համար։

◆ Օդեսայում վախճանված կալուածատէր Կարամնեվը մի միլիօնի կարողութիւն է կտակել Սերբիայի դպրոցների կարիքների համար։

◆ Իտալիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները ստանում են լարված բնաւորութիւն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

5 նոյեմբերի

ԲԵՐԼԻՆ։ Տեղիս համալսարանում հիմնվեց Արևելեան Եւրոպայի, մասնաւորապէս Ռուսաստանի ընդհանուր ուսումնասիրութեան ու պատմութեան նոր ամբիօն։

ՍՈՒՎԱԼԿԻ։ Եկաւ ժող. լուս. մինիստր Կասսօն։

ՅԱԼՏԱ։ Մեկնեց ներքին գործերի մինիստրը։

ԹԱՒՐԻԶ։ Օդագնաց Կուզմինսկիի թռիչքը Թաւրիզից Շարաֆխան շարունակվեց մի ժամ և 26 րօպէ։ Թռիչքի ժամանակ պարսիկները սարսափահար թագնվում էին քարայրում։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թ-ի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը (Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պոստային գնացքը № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Պոստային գնացքը № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլովօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ Մարդատար գնացքը № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պոստային գնացքը № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. ր.50 ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.—Մարդատար գնացքը № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ Մարդատար № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 5—9 ժ. 35 ր. եր. Պոստային գնացքը № 3—9 ժ. 1 ր. առ.։ Մարդատար գնացքը № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Պոստային գնացքը № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ Մարդատար գնացքը № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 10—8 ժ. 40 ր. առ.։ Խառն գնացքը № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պոստային գնացքը № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—Մարդատար գնացքը № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ Մարդատար գնացքը № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻ

հետևեալ հրատարակութիւնները.

1) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1906 թ. համարը, յօգուտ կովկասահայ արկածեալների . 4 ր.
2) «ԳԵՂՈՒՆԻ» պատկերազարդ հանդէսի 1909 թ. համարը, յօգուտ Ադանայի արհաւիրքներին ենթակայ հայերի . . . 4 ր.
3) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ՁԷՅԹՈՒՆՑՈՒՆ», յօգուտ Զէյթունի հայ սովեալների 2 ր.
«ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ», բժշկ. Գ.
4) Բաբեանի I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . 1 ր.
II հատոր, Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան . . . 1 ր. 60 կ.
5) «ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ», Պ. Ադամեանի 1 ր.
6) «ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ», Քամալեանց Ս.-ի . 50 կ.

Յիշեալ գրքերը Թիֆլիսում մեզանից գնողները կարող են իրանց իսկական գներով ձեռք բերել։

Թիֆլիսից դուրս պահանջողների հաշւին է ճանապարհածախսը։

1. 0—1

ГОЛОВНУЮ БОЛЬ и МИГРЕНЬ
РАДИКАЛЬНО УСТРАНЯЕТЪ
„МИГРЕНО-НЕРВОЗИНЪ"
БЕЗУСЛОВНО ВѢРНОЕ и БЕЗВРЕДНОЕ РАСТИТЕЛЬНОЕ СРЕДСТВО.
ТРЕБОВАТЬ въ АПТЕКАХЪ и АПТ. МАГАЗ.
ТОЛЬКО НАСТОЯЩИХЪ ПОРОШКОВЪ
съ ПѢТУХОМЪ апт. А. ГОНСЕЦКАГО
въ Г. ПЛОЦКѢ по 10 коп. за шт.
ОСТЕРЕГАЙТЕСЬ ПОДДѢЛОКЪ!
ФАБР. МАРКА
(В. 54178) 39—9

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ

ձեռնադրվել ծխական քահանայ որևէ հայկական գիւղի վրա։ Ունեմ ըստ ծխ. կանոն. յօդ. ուսման վկայականներ։ Դիմել Սևան, գիւ. Արշակ Ծովիանեանին։

1005. 1—1

Ա. ԿԻՎԻՏ

Պատրաստում է ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ համար, նոյնպէս և գիմնազիական ու միջնակարգ բոլոր դպրոցները մտնելու, նաև I կարգի կամաւոր զինուոր պատրաստվելու համար։ Ըստ ցանկութեան՝ Ա. Կիվիտ վերցնում է իր վրա ամբողջ պատասխանատուութիւնը քննութիւնների աջողութեան վերաբերմամբ։ Ընդունելութիւնը ցեր. ժամը 12—1-ը և երեկ. ժամը 5—6-ը։ Ելիզավետինսկայա փող. № 142 (անկիւն Պիրոգովի փող.)։

(ա. օ.) 972. 10—7

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Առևտրի և Բորգին. Մինիստր. լուսաւորութեան ներքոյ գտնվող Առևտրական գիմնազիների Կուրսերի ղեկավար

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

հետևեալ նոր աշխատասիրութիւն-ձեռնարկները.

I.
ՁԵՌՆԱՐԿ
առևտր. և բանկային ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ, իտալական կրկնակի սիստեմով։ Տեսական և գործնական մաս։ Գիրքը բաղկացած է 470 էջից և արժէ 3 ռուբ.։

II.
ՁԵՌՆԱՐԿ
առևտր. Թղթակցութեան առևտր. դպրոցների և հաշւապահական կուրսերի համար։ Գինը 1 ր. 30 կ.։

III.
Առևտրական օրէնսգիտութիւն
առևտրական կուրսերի ծրագրին համապատասխան գործադրելի։ Գինը 80 կոպ.։

Գլխաւոր պահեստը կուրսերին կից (Тифлисъ, Михайловскій пр., № 24. Тел. 9—76). «Հաշւապահական Ձեռնարկը» ուղղակի պահեստից պահանջողները ճանապարհածախք չեն վճարում։

(Ե. Հ. Չ.) 974. 5—3

Չափահասների համար
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
Բժշկ. ֆէլշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ րեցեպտներով, խորհուրդներով և նկարներով։ Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լեզուն շատ պարզ ու մտերիմ հասկանալի։ Գինն է 50 կ.։
2) «Տրիպէր (սուսունակ) եւ նրա բժշկութիւնը» րեցեպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Ինն է 20 կ.։
3) «Ներկայումսի ցավերը կամ մօգեր [illegible]», խիստ ծիծաղաշարժ վօդէվիլ միմիայն չափահասների համար։ Ինը 20 կ.։
4) «Սեռայի հնարքներ» յայտնի վօդէվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ.
5) «Միւնսոյն գաղտնում», [illegible] թարգմանական կտորներից. գինը ինը 7 կ.։
6) «Բաճէճիի կենսագրութիւնը», պատկերով։ Ամենքին հասկանալի գրված։ Ինը 10 կ.։

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պահանջողները պէտք է առաջուց ղրկեն գրքերի գինը մարկաներով ճանապարհածախքը՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Անպայման՝ զակազնոյ)։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Есаянцу.

(Հ. Կ.) 44. 100—65

ԴԱՅԻՐԱՆԵԱՆ ԴՊՐ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

խնդրում է Մողնու եկ. ծխականներին, կիրակի, նոյեմբերի 10-ին, ցերեկ. ժամը 12-ին, շնորհ բերել դպրոց, ուր սրբազան առաջնորդի թոյլտուութեամբ ժողով է լինելու։ Ժողովի զբաղմանց առարկաներն են՝ անցած տարվայ ելից և մտից հաշիւների վերաստուգութիւնը և այս տարվայ նախահաշւի քննութիւնը։ Նոյն ժողովին պիտի ընտրվի երէցփոխ եկեղեցու համար։ Ներկայ ժողովը երկրորդ անգամը հրաւիրվելով՝ կը կայանայ որքան ծխական էլ ներկայ լինի։

1004. 2—1 Նախագահ հոգաբարձութեան՝ Նիկ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

առևտր. Կովկ. Օֆիցէր. Տնտես. Ընկ.

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱՆՈՒԹ

Դ. Գ. ԱՄԻՆՏԱԵՎԻ

Թիֆլիս, Երօշենսկայա փող. № 19. Տելեֆոն № 15—82.

ԽՈՇՈՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԸՆՏԻՐ

ամեն տեսակ գորգեր, փալասներ, կարպետներ, պարսկ. զանազան մետաքսեայ վերմակներ, բաշլիխներ և կտորեղէններ, կովկասեան խաֆիզներ, կօշկեղէն, արծաթեղէն, ճանապարհորդ. առարկաներ, զգակներ, բաշլըղներ, ասիական շալեր, անտիկ առարկաներ և այլն։ Գնում ենք հին գորգեր կամ փոխարինում նրանց նորերով։

ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ ԵՆ

Փիրման գոյութիւն ունի 1870 թւից։ Պահեստը Զուբալովի քարվանսարայում։

(Ե.Հ.Կ.) 941. 10—8

КОНТОРА М. А. ГАЖОНІЯ

переведена съ 1-го ноября с. г. въ Пушкинскій пассажъ № 20 и принимаетъ объявленія въ мѣстныя и иногороднія газеты. Условія льготныя и выгодныя. Исключительное представительство нѣсколькихъ редакцій. Тамъ-же и пріемъ рекламъ на Тифлис. трамвай. 2-й адресъ—гост. „Ветцеля", телеф. 830; кв. Ваке, с. д. телеф. № 925.

(ш.о.) 988. 5—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный